«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

«ԷՐԵԲՈՒՆԻ» ԲԺՇԿԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

ԻՆՍՏԻՏՈՒՏԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան – 2022

ՆԱԽԱԲԱՆ

«Էրեբունի» բժշկական ակադեմիայի (այսուհետ՝ ԷԲԱ կամ Ակադեմիա) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է ԷԲԱ-ի ներկայացրած դիմումի համաձայն:

Հավատարմագրման գործընթացը կազմակերպել և համակարգել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը (այսուհետ՝ ՈԱԱԿ)՝ առաջնորդվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011 թվականի հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N 959–Ն որոշմամբ:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի» պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը, որը բաղկացած էր 4 տեղացի և 1 միջազգային փորձագետներից:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Առանձանահատուկ շեշտադրվել է հաստատության և գործատուների հետ համագործակցությունը և դրա ազդեցությունը կրթության բովանդակության վրա:

Սույն զեկույցը պարունակում է ԷԲԱ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ 3

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 4

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ՄՈՒՀ-Ի ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ 12

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 15

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ 15

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 16

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 21

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 21

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 24

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 28

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 33

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ 39

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ 43

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 48

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 52

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 59

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ 63

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 67

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 71

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 72

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ 72

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ 75

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 78

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 83

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 84

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 85

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ԷԲԱ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը[1]: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատում իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ ԷԲԱ-ն համաձայն 2019թ. մայիսի 2-ին ընդունած առաքելության ձգտում է. պատրաստել կրթության զարգացման պետական ռազմավարության շրջանակներում հանրապետության առողջապահական ոլորտի համար պետական կրթական չափորոշիչներին և միջազգային չափանիշներին համապատասխան միջին մասնագիտական կրթությամբ որակյալ մասնագետների /բուժքույր, մանկաբարձ, դեղագործ, ատամնատեխնիկ, բուժքույր-կոսմետոլոգ/ պատրաստումը ու բարձրացնել նրանց մրցունակությունն աշխատաշուկայում, համապատասխանեցնել կրթական ծրագրերը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման պահանջներին, համակողմանի ձևավորել ազգային և համամարդկային ոգով դաստիարակված անձ և քաղաքացի, որը նպատակաուղղվում է անհատների, ընտանիքների, հասարակության առողջությանը և կյանքի որակի բարելավմանը:

Փորձագիտական խումբը հաշվի է առել այն հանգամանքը, որ ԷԲԱ-ն նորաստեղծ միջին մասնագիտական ուսումնական հաստատություն է,

[1] Փորձագիտական խմբի անդամների ինքնակենսագրականներ

2022 թվականին առաջին անգամ ունեցել է շրջանավարտներ և առաջին անգամ է անցնում հավատարմագրման գործընթաց։

Հաստատության ՄԿԾ-ները կազմված են ՈԱՇ-ին համապատասխան և ընդհանուր առմամբ հիմնված են ՊԿՉ-ով նախատեսված վերջնարդյունքների վրա։ Ակադեմիայում մեծ ուշադրություն են դարձնում դասավանդման և ուսումնառության բազմազան մեթոդների կիրառմանը, որի արդյունքում ուսանողների մոտ ձևավորվում են գիտելիքի վրա հիմնված գործնական հմտություններ։

Փորձագիտական խումբը դրական է համարում պրակտիկ բժիշկների և գործատուների ներգրավումն ուսումնական գործընթացին, որի արդյունքում ուսանողներին փոխանցվում են մասնագիտական գործնական հմտություններ և բարձրանում է աշխատաշուկայում շրջանավարտների մրցունակությունը։

ԷԲԱ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր, իսկ ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար։ Ստեղծվել է նորագույն սարքավորումներով հագեցած լաբորատորիաներ և կաբինետներ։

Փորձագիտական խումբը նշում է, որ ԷԲԱ-ի վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, չնայած, որ անհրաժեշտությաւն կա սահմանել չափելի ցուցիչներ և կատարման ժամկետներ ռազմավարական ծրագրի հիմնական նպատակների իրականացման համար։

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ԷԲԱ-ի հոգաբարձուների խորհրդի անդամները ակտիվ մասնակցություն ունեն հաստատության գրեթե բոլոր գործընթացներում։

Որակի ապահովման համակարգը ԷԲԱ-ում դեռևս ձևավորման փուլում է, և ՊԻԳԲ շրջափուլը ամբողջովին փակված չէ Ակադեմիայի հիմնական գործառույթների համար։ Սակայն փորձագիտական խումբը գնահատելի է համարում, որ որակի ապահովման պատասխանատուն բավականին

մոտիվացված է և հստակ պատկերացնում է հաստատության խնդիրները, նրա ուժեղ և թույլ կողմերը: Որակի ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների իրազեկման և ներգրավման համար մեխանիզմների ներդրման կարիք կա:

Ակադեմիայում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման մեխանիզմներ: Ուսանողների կրթական կարիքների բացահայտման մեխանիզմները սահմանափակվում են հարցումներով, իսկ նախասիրական /կամընտրական/ պարապմունքներ չեն իրականացվում: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ Ակադեմիան, որպես միջին մասնագիտական ուսումնական հաստատություն, միտված է ուսանողներին ներգրավել գիտահետազոտական աշխատանքներում և, որ ԷԲԱ-ն «Քույրական գործ» մասնագիտությունում ներդրել է հետազոտական դասընթաց, որի միջոցով փորձում է ուսանողներին ծանոթացնել գիտահետազոտական աշխատանք գրելու կանոններին:

Հաստատությունում հաշվետվողականությունը չունի վերլուծական բնույթ, գործընթացների թափանցիկության և հասարակությանը հասանելիության ցածր աստիճանը, հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմների բացակայությունը տեսանելի չի դարձնում Ակադեմիան հասարակության լայն շերտերին:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն փաստը, որ արտաքին կապերի հաստատման և միջազգայնացման գործընթացները սահմանված են ռազմավարական ծրագրում, ներկայացված են բարելավման միջոցառումների տարեկան պլանում, և այս ուղղությամբ Ակադեմիան ակտիվ մասնակցություն է ապահովում միջազգային առցանց կազմակերպվող սեմինարներին, վեբինարներին և կոնֆերանսներին:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1. Ակադեմիայի գործունեության և վարած քաղաքականության համապատասխանությունը սահմանված առաքելությանը և նպատակներին:

2. Կառավարման համակարգում հոգաբարձուների խորհրդի անդամների ակտիվ ներգրավվածությունը և որոշումների կայացման մասնակցությունը:
3. ՊԿՉ-ով նախատեսված վերջնարդյունքների վրա հիմնված մասնագիտական կրթական ծրագրերը:
4. Մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման համար ժամանակակից ռեսուրսներով հագեցած միջավայրը:
5. Դասավանդման և ուսումնառության բազմազան մեթոդների կիրառումը:
6. Գիտելիքի վրա հիմնված գործնական հմտությունների ձևավորումը:
7. Հետազոտական բաղադրիչի ներմուծումը միջին մասնագիտական կրթական ծրագրերերում:
8. Արտաքին շահակիցների ներգրավումը ուսումնական գործընթացում:
9. Միջազգային կապերի և համագործակցության ընդլայնումը:
10. Բժշկական միջին մասնագիտական ոլորտի նորությունների ներդնումն ուսումնառության մեջ:

Հաստատության թույլ կողմերն են.

1. Քանակական և որակական տվյալների հավաքագրման, դրանց հիման վրա հաշվետվությունների և վերլուծությունների մեթոդաբանության բացակայությունը:
2. Բյուջեի այլընտրանքային ֆինանսական մուտքերի բացակայությունը:
3. Ուսանողների բարձր առաջադիմության և հասարակական ակտիվության համար խրախուսման կարգի բացակայությունը:
4. Դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի համար խրախուսման մեխանիզմների բացակայությունը:
5. Ակադեմիայում ընթացող գործընթացների մասին թերի տեղեկատվություն պարունակող կայքէջը:
6. Կառավարման և որակի ապահովման գործընթացներում ՊԻԳԲ շրջափուլի ամբողջական չլինելը:
7. Որակի ապահովման գործընթացներում քանակական և որակական վերլուծությունների պակասը:

8. Հատուկ կարիք ունեցող ուսանողների և դասախոսների համար պայմանների բացակայությունը:

Հիմնական խորհրդատվություններ.

Առաքելությունը և նպատակները

1. Մշակել Ակադեմիայի առաքելության և նպատակների կատարման համար ՊԻԳԲ շրջափուլի գնահատման և բարելավման բաղադրիչներով ընթացակարգեր:
2. Սահմանել չափելի ցուցիչներ և կատարման ժամկետներ ՌԾ նպատակների իրականացման և մշտադիտարկման նպատակով:
3. Մշակել և ներդնել արտաքին շահակիցների կարիքների վերհանման համար այնպիսի մեխանիզմներ, որոնք ուղղված կլինեն Ակադեմիայի առաջընթացին և զարգացմանը:

Կառավարումն ու վարչարարությունը

4. Հստակեցնել հաստատության կառուցվածքը՝ ընդգծելով հիերարխիկ կապերը, տարանջատելով և հստակեցնելով վարչական կազմի գործառույթները, անհրաժեշտության դեպքում համալրելով կազմը:
5. Վերանայել ներքին հաշվետվողականության համակարգը՝ կարևորելով տվյալների վերլուծությունը և ապահովելով եզրակացություններ հաջորդ տարիների արդյունավետ պլանավորման համար:
6. Հայթայթել այլընտրանքային ֆինանսական միջոցներ՝ ապահովելով ՄՈՒՀ-ի ֆինանսական կայունությունը և հետագա զարգացումը:

Մասնագիտության կրթական ծրագրերը

7. Բազմազանեցնել և ապահովել նախասիրական ու ընտրովի դասընթացների իրականացումը:
8. Կազմել փաթեթներ ուսումնական պլանների բոլոր դասընթացների համար, որում հստակ նշված կլինեն դասավանդման և ուսումնառության համապատասխան մեթոդները, վերջնարդյունքները, գնահատման ձևերը և գրականության ցանկը:

9. Կրթական ծրագրերի կազմման, վերանայման և մշտադիտարկման ուղեցույցում ներդնել ՄԿԾ մշտադիտարկման մեխանիզմներ՝ հստակեցնելով ժամկետները, պատասխանատուները և ակնկալվող արդյունքները:

Ուսանողները

10. Կանոնակարգել մասնագիտական կողմնորոշման նպատակով իրականացվող դպրոցներ այցերի ժամանակացույցը՝ գնահատելով արդյունավետությունը:

11. Հստակեցնել ՈւԽ-ի դերը Ակադեմիայում որպես ինքնավար մարմին (ՈւԽ նախագահի ընտրության փոփոխություն, ՈւԽ կանոնադրության պահպանում):

12. Ստեղծել շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ տեղեկատվական բազա:

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

13. Կանոնակարգել դասախոսների գնահատման գործընթացները՝ գործարկելով ներդրված գնահատման և խրախուսման ուղեցույցը:

14. Ապահովել պրոֆեսորադասախոսական ինչպես նաև ուսումնաօժանդակ կազմի պարբերական վերապատրաստումներ՝ հիմնվելով կարիքների վերհանման վրա:

Հետազոտությունը և զարգացումը

15. Ստեղծել ուսանողների և դասախոսական կազմի հետազոտական աշխատանքների պորտֆոլիոներ՝ հետևելով դասախոսական և ուսանողական կազմի հետազոտական կարողությունների զարգացմանը:

16. Ներդնել հետազոտական գործունեության խրախուսման հստակ մեխանիզմներ և շարունակական դարձնել հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցմանն ուղղված աշխատանքները:

Ենթակառուցվածքը և ռեսուրսները

17. Ապահովել գրադարանային ֆոնդի էլեկտրոնային հասանելիությունն ուսանողների համար:

18. Շարունանական դարձնել ժամանակակից սարքավորումներով լսարանային ֆոնդի և լաբորատորիաների վերազինումը:

19. Հարմարեցնել շենքային պայմանները հատուկ կարիքներ ունեցող անձանց համար:

Հասարակական պատասխանատվությունը

20. Ապահովել հաշվետվողականության թափանցիկությունը՝ հասանելի դարձնելով դրանք շահակիցների լայն շրջանակին:

21. Ապահովել հաշվետվություններում վերլուծական բաղադրիչը՝ ներառելով առաջընթացի վերլուծություններ:

22. Ակտիվացնել սոցիալական հարթակների գործունեությունը՝ ապահովելով շահակցիների համար լիարժեք և եռալեզու (հայերեն, ռուսերեն, անգլերեն) տեղեկատվություն՝ նպաստելով ՄՈՒՀ-ի միջազգայնացմանը:

23. Մշակել հասարակության հետ հետադարձ կապերի արդյունավետ մեխանիզմներ:

24. Բազմազանեցնել հասարակությանը գիտելիքների փոխանցման մեխանիզմները՝ ընդգրկելով ինչպես դասախոսական այնպես էլ ուսանողական կազմին:

Արտաքին կապերը և միջազգայնացումը

25. Հստակեցնել միջազգային կապերի համակարգողի գործառույթները, ինչպես նաև հստակ ցուցիչներով պլանավորել միջազգային գործունեության և արտաքին կապերի զարգացման աշխատանքները:

26. Ընդլայնել և բազմազանեցնել տեղական համագործակցության սահմանները:

27. Հայթայթել միջազգային ծրագրեր՝ ապահովելով ուսանողների և դասախոսների մասնակցությունը փոխանակման ծրագրերին:

Որակի ներքին ապահովման համակարգը

28. Մշակել ՄՈՒՀ-ում իրականացվող տարբեր գործընթացների արդյունավետության գնահատման մեխազնիմներ՝ ապահովելով համապատասխան վերլուծությունների և եզրահանգումների կանոնակարգված առկայությունը:

29. Վերանայել ՄՈՒՀ-ի որակի ապահովման գործընթացների իրականացման փաստաթղթային հենքը՝ ապահովելով դրանց համապատասխանությունը և կիրառելիությունը ՄՈՒՀ-ում իրականացվող գործընթացներին։

30. Զարգացնել որակի ապահովման գործընթացների համար պատասխանատուների մասնագիտական կոմպետեցիաները՝ անհրաժեշտության դեպքում ընդգրկելով համապատասխան մասնագիտական վերապատրաստումների կամ փորձի փոխանակումների գործընթացներին։

31. Ապահովել ՄՈՒՀ-ի գործունեության տարբեր ոլորտների արդյունավետության գնահատման վերլուծությունների և դրանց արդյունքների հասանելիությունը արտաքին և ներքին շահակիցներին։

Հերմինե Գրիգորյան

Փորձագիտական խմբի ղեկավար

30.08.2022թ.

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ՄՈՒՀ-Ի ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Ակադեմիան իր զարգացման ռազմավարական ծրագրում ներառել է միջազգայնացումը որպես ռազմավարական ուղղություն: Հիմնադրման օրվանից ի վեր (2019թ.) սերտ կապեր են պահպանվել Ամերիկայի Միացյալ Նահանգների գործընկերների հետ ինչպես ընթացիկ կրթական միջոցառումների (դասընթացներ, դասախոսություններ, վերապատրաստումներ), այնպես էլ մտքերի փոխանակման, տարբեր վեբինարների և սեմինարների մասնակցության շրջանակներում: Ստորագրման են պատրաստվում համագործակցության պայմանագրեր օտարերկրյա կրթական և բժշկական կազմակերպությունների հետ: Ակադեմիան ձգտում է զարգացնել համագործակցությունը Երևանի բժշկական և դեղագործական լայն կազմակերպությունների հետ, ինչը դրականորեն է ազդում իրականացվող կրթական ծրագրերի որակի վրա:

Ակադեմիան ներկայումս ավելի շատ կենտրոնացած է մասնագետների պատրաստման ազգային չափանիշների և ամերիկյան կրթական հաստատությունների հետ հարաբերությունների զարգացման վրա: Ակադեմիան սերտ հարաբերություններ ունի ԱՄՆ բժշկական համայնքի ներկայացուցիչների հետ: Վեբինարներն անցկացվել են ամերիկացի բժիշկների մասնակցությամբ: Նախատեսվում է նաև համագործակցության պայմանագիր կնքել ԱՄՆ Տեխաս նահանգի Թայլեր համալսարանական քոլեջի հետ՝ ակադեմիական շարժունությունն ապահովելու համար: 2022-2023 թվականների սկզբին նախատեսվում է Ակադեմիայի ծրագրերի բենչմարքինգ իրականացնել Երևանի հայ-ամերիկյան «Էրեբունի» պետական բժշկական քոլեջի կրթական ծրագրերի հետ: ԱՄՆ-ի Գլոբալ կրթության զարգացման ինստիտուտի հետ առկա է փոխգործակցություն 2023 թվականին Մոնրեալում Բուժքույրերի միջազգային խորհրդի (ICN) աշխատանքներին Ակադեմիայի ներկայացուցիչների մասնակցության առումով:

Ակադեմիան նախատեսում է բարելավել դասախոսների անգլերենի իմացության մակարդակը: Այդ նպատակով նախատեսվում է անգլերենի վերապատրաստման դասընթաց անցկացնել 2022 թվականի սեպտեմբերին:

Ակադեմիայի առավելությունը ստեղծված ստորաբաժանումների կառուցվածքն է՝ հաստատված ենթակայության և փոխգործակցության կապերով, որն ապահովում է որոշումների կայացման կանոնակարգված գործընթացներ. Ուսումնական գործընթացի համար բավարար պայմանները (տարբեր տեսակի պարապմունքների անցկացման համար բավարար տարածքներ, սիմուլյացիա և տեխնիկական սարքավորումներ) նույնպես կազմակերպության ուժեղ կողմն են: Այնուամենայնիվ, կա մարդկային և ֆինանսական ռեսուրսների պակաս, ինչը վտանգ է ներկայացնում Ակադեմիայի կայունության համար: Կառավարման և որոշումների կայացման գործընթացներում ներգրավված են ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շահակիցները: Ուսանողական խորհրդի նիստերը պարբերական չեն և չունեն հստակ աշխատանքային ծրագիր: Ռազմավարական և կարճաժամկետ պլանավորման գործընթացները գործնականում իրականացվում են, սակայն պլանավորման փաստաթղթերում չկան չափելի նպատակներ, որոնք դժվարացնում են դրանց իրականացման մշտադիտարկումն ու վերահսկումը: ՊԻԳԲ շրջափուլը գործընթացների մեծ մասում փակված չէ, ինչը բացատրվում է Ակադեմիայի գոյության կարճ ժամանակահատվածով և վերլուծության համար բավարար տեղեկատվության բացակայությամբ:

Ակադեմիայի ղեկավարությունն ապահովում է իրականացվող ծրագրերի արդյունավետության և այլ գործընթացների վերաբերյալ տվյալների հավաքագրում՝ հիմնականում ներքին և արտաքին շահակիցների հարցումների միջոցով: Հարցաթերթիկները կազմվել են Ակադեմիայի անձնակազմի կողմից ինքնուրույն՝ սեփական գաղափարների և համացանցում բաց աղբյուրների հիման վրա, հարցաթերթերում ներկայացված հարցերը բավարար չեն գնահատվող գործընթացների խորը վերլուծություն իրականացնելու համար: Ցավոք, մշակված չեն մեխանիզմներ ընթացիկ կրթական ծրագրերի և շնորհված որակավորումների վերաբերյալ ստացված տեղեկատվության հավաստիությունը գնահատելու համար:

Ինքնավերլուծության ուսումնասիրությունից պարզվեց, որ բարելավման և զարգացման տեսանկյունից ուշադրության կենտրոնում է եղել «Քույրական գործ» կրթական ծրագիրը:

Ակադեմիայի դասախոսների թվում կան գործնական մեծ փորձ ունեցող, բայց դասավանդման քիչ փորձ ունեցող ոլորտի պրակտիկ մասնագետներ: Փորձ չունեցող դասախոսներին Ակադեմիայի ընձեռած հնարավորություններից մեկը ենթադրում է վերապատրաստման դասընթացներ ուսուցման և դասավանդման մեթոդների ընտրության վերաբերյալ:

Ուսումնական պլանի կառուցվածքում կամընտրական առարկաների և այլընտրանքային դասընթացների բացակայությունը ուսանողներին թույլ չի տալիս ակտիվորեն մասնակցել կրթական հետագծի ընտրությանը, ներառյալ ոչ միայն մասնագիտական կարողությունների, այլև այլ հմտությունների (հաղորդակցական, հետազոտական և այլն) զարգացմանը:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

ԷԲԱ ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

1. **Հերմինե Գրիգորյան՝** Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի Բնական գիտությունների ֆակուլտետի դեկան, «Մաթեմատիկայի և ինֆորմատիկայի» ամբիոնի դոցենտ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, փորձագիտական խմբի ղեկավար:

2. **Ալեքսեյ Կրյուկով՝** Կուրսկի պետական բժշկական համալսարանի ուսումնական գծով փոխտնօրեն, դոցենտ, բժշկական գիտությունների թեկնածու, միջազգային փորձագետ:

3. **Հեղինե Գևորգյան՝** Երևանի պետական համալսարանի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի ավագ լաբորանտ, կենսաբանական գիտությունների թեկնածու, փորձագիտական խմբի անդամ:

4. **Ռոզա Գրիգորյան՝** Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի դասախոս, ատամնատեխնիկական գործ և դեղագործության ամբիոնի վարիչ, փորձագիտական խմբի անդամ:

5. **Վահե Հովհաննիսյան՝** Արարատի տարածաշրջանային պետական քոլեջի ուսանող, փորձագիտական խմբի անդամ:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ Քաղաքականության մշակման և իրականացման բաժնի մասնագետ Ռոզա Բաբայանը:

Փորձագիտական խմբի բոլոր անդամները, այդ թվում թարգմանիչն ու համակարգողը ստորագրել են անկախության և գաղտնիության համաձայնագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար ԷԲԱ-ն դիմել է ՈԱԱԿ (23.08.2021)՝ լրացնելով սահմանված ձևաչափի դիմում-հայտը և ներկայացնելով լիցենզիայի և դրա հավելվածների կրկնօրինակները:

ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները և կից փաստաթղթերը:

Դիմում-հայտի ընդունման մասին որոշում կայացնելուց հետո ՈԱԱԿ-ի և ԷԲԱ-ի միջև կնքվել է երկկողմ պայմանագիր: Կազմվել և հաստատվել է աշխատանքների իրականացման ժամանակացույց:

Ինքնավերլուծություն

ԷԲԱ-ն ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը ներկայացրել է 18.05.2022թ.-ին: Ինքնավերլուծությունն իրականացվել է հաստատության 12 աշխատակիցների՝ դասախոսների, ուսումնաօժանդակ և ղեկավար կազմի կողմից: Ինքնավերլուծության գործընթացին արտաքին շահակիցները չեն մասնակցել:

ՈԱԱԿ-ի համակարգողն ուսումնասիրել է զեկույցը՝ տեխնիկական առումով ՈԱԱԿ-ի պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով: Սահմանված ժամկետում Ակադեմիայի կողմից ներկայացված ինքնավերլուծությունը ընդունվել է ՈԱԱԿ-ի կողմից: Այնուհետև

ինքնավերլուծությունն ու կից փաստաթղթերի փաթեթը, Ակադեմիայի կողմից լրացված էլեկտրոնային հարցաշարը տրամադրվել են փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել է հաստատության հետ և հաստատվել ՈԱԱԿ-ի տնօրենի հրամանով:

Նախապատրաստական փուլ

Փորձագիտական խմբին՝ աշխատանքներին նախապատրաստելու և գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով իրականացվել են վերապատրաստումներ հետևյալ թեմաներով՝

1. փորձագիտական խմբի անդամների հիմնական գործառույթները,

2. հանդիպումների անցկացման և հարցապնդումների էթիկան և տեխնիկան,

3.ՄԿՈ (Մասնագիտական կրթություն և ուսուցում) ոլորտի առանձահատկությունների սահմանում և հավատարմագրման չափանիշների մեկնաբանում միջին մասնագիտական ոլորտին համապատասխան,

4. նախնական գնահատումը որպես փորձագիտական զեկույցի նախապատրաստման փուլ, զեկույցին ներկայացվող հիմնական պահանջները:

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով ակադեմիայի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ ձևաչափի՝ պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը: Նախատեսված ժամկետներում փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները, և համակարգողը կազմել է փորձագիտական այցի պլան-ժամանակացույցը[2]: Առաջնորդվելով ՈԱԱԿ-ի

[2] Փորձագիտական այցի ժամանակացույց

Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն, զուգահեռ հանդիպումներ և այլն: Զուգահեռ հանդիպումների ընթացքում փորձագիտական խումբը բաժանվում է՝ յուրաքանչյուր փորձագետ ըստ իր մասնագիտական ուղղվածության: Յուրաքանչյուր փորձագետ (բացի ուսանող փորձագետից, նա միացել է մյուս փորձագետներից մեկին) հնարավորություն է ունեցել առանձին մասնագիտական հանդիպումներ ունենալ քոլեջի կողմից ներկայացված կրթական ծրագրում դասավանդող դասախոսների, կրթական ծրագրի պատասխանատուի և ուսանողների հետ: Նախքան մասնագիտական հանդիպումները փորձագետներն իրենց մասնագիտության շրջանակներում ուսումնասիրել են մոդուլների շրջանակներում ուսանողներին տրվող հանձնարարականները՝ հասկանալու, թե այդ հանձնարարականները որքանով են միտված մոդուլում սահմանված կատարման չափանիշների ձեռքբերմանը:

Նախնական գնահատման ընթացքում փորձագիտական խումբը իրականացրել է պրակտիկաների դիտարկում: Այսպիսով, փորձագիտական խումբը այցելել է «Էրեբունի բժշկական կենտրոն» և «Նորադենտ» ատամնաբուժական կլինիկա, դիտարկել «Քույրական գործ» և «Ատամնատեխնիկական գործ» բաժիններում սովորող ուսանողների պրակտիկ դասաժամերը:

Նախնական այց

2022 թվականի հունիսի 21-ին տեղի է ունեցել նախապատրաստական այց ԷԲԱ: Հանդիպմանը ներկա են եղել ՈԱԱԿ համակարգողը, ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարը և փորձագիտական խմբի ղեկավարը: Հանդիպման ընթացքում քոլեջին են ներկայացվել և նրանց հետ համաձայնեցվել փորձագիտական այցի պլան-ժամանակցույցը, ինչպես նաև քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական

այցի տեխնիկական, կազմակերպչական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2022թ. Հուլիս 6-ից 8-ն ընկած ժամանակահատվածում: Ժամանակացույցի համաձայն՝ 05.07.2022 թ.-ին փորձագիտական այցի աշխատանքները մեկնարկել են փակ հանդիպմամբ, որի նպատակն էր միջազգային փորձագետի հետ քննարկել և համաձայնեցնել փորձագիտական գնահատման շրջանակը, այցի ընթացքում ուսումնասիրման ենթակա խնդիրները, ԷԲԱ-ի ուժեղ և թույլ կողմերը՝ ըստ չափանիշների, ֆոկուս խմբային հանդիպումների ընթացակարգը, հստակեցնել հետագա քայլերը:

Փորձագիտական այցը սկսվել և ավարտվել է ԷԲԱ ռեկտորի հետ հանդիպումներով: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների՝ դասախոսներ, ուսանողներ և շրջանավարտներ մասնակիցներն ընտրվել են պատահականության սկզբունքով՝ նախօրոք տրամադրված ցանկից: Իրականացվել են ըստ ժամանակացույցի նախատեսված բոլոր հանդիպումները: Այցի ընթացքում փորձագիտական խումբն իրականացրել է փաստաթղթերի ուսումնասիրություն, ռեսուրսների [3]դիտարկում և ֆոկուս խմբային հանդիպումներ:

Փորձագիտական այցի յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում տեղի ունեցած փորձագիտական խմբի փակ հանդիպման ժամանակ դուրս են բերվել փորձագիտական գնահատման միջանկյալ արդյունքները, իսկ այցի ավարտին փակ քննարկմամբ ամփոփվել են այցի հիմնական արդյունքները:

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խումբը նախնական գնահատումն իրականացրել է հաստատության ներկայացրած ինքնավերլուծության, դրան կից փաստաթղթերի ուսումնասիրության, ռեսուրսների դիտարկման և փորձագիտական այցի

[3] Փորձագիտական խմբի կողմից դիտարկված ռեսուրսներ

դիտարկումների հիման վրա՝ պարբերաբար կազմակերպվող քննարկումների արդյունքում: Քննարկումներից հետո դուրս բերված դիտարկումների հիման վրա փորձագիտական խումբը պատրաստել է փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը, որը համաձայնեցվել է փորձագետների հետ օգոստոսի 19-ին:

Փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը ներկայացվել է ԷԲԱ 22.08.2022 թ-ին:

Զեկույցի վերաբերյալ իր արձագանքը ԷԲԱ-ն ուղարկել է ՈԱԱԿ 23.08.2022-ին: Ուսումնասիրելով փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը՝ Ակադեմիան չի ներկայացրել առարկություններ: Փորձագիտական խումբը կազմել է զեկույցի վերջնական տարբերակը, որը խմբի կողմից հաստատվել է 30.08.2022-ին:

Ռոզա Բաբայան

Փորձագիտական խմբի համակարգող

30.08.2022թ.

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատմություն. «Էրեբունի» բժշկական ակադեմիա հիմնադրամը ոչ առևտրային կազմակերպություն է, որը հիմնադրվել է 2019թ. մայիսի 02-ին, գործում է ՀՀ սահմանադրության, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, Հիմնադրամների մասին ՀՀ օրենքի, ՀՀ միջազգային պայմանագրերի, Ակադեմիայի կանոնադրության և այլ իրավական ակտերի համաձայն: Հիմնադրամի կառավարման մարմիններն են՝

- Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը /Խորհուրդ/
- Հիմնադրամի գործադիր տնօրեն /Ռեկտոր/

Երևանի «Էրեբունի» բժշկական ակադեմիայի տեսլականն է՝ հաստատությունը դարձնել միջին մասնագիտական բժշկական բարձր մակարդակի կրթություն ապահովող ուսումնական հաստատություն: Ազգային կրթությունը համադրելի դարձնել կրթության բովանդակության միջազգային չափանիշներին՝ ուսումնառողներին տրամադրելով ժամանակակից պահանջները բավարարող կարողութենամետ կրթություն, որը հնարավորություն կտա ազատ տեղաշարժի և դիպլոմների համարժեքության ճանաչման: Ակադեմիայի առաքելությունն է կրթության զարգացման պետական ռազմավարության շրջանակներում հանրապետության առողջապահական ոլորտի համար պետական կրթական չափորոշիչներին և միջազգային չափանիշներին համապատասխան միջին մասնագիտական կրթությամբ որակյալ մասնագետների/ բուժքույր, մանկաբարձ, դեղագործ, ատամնատեխնիկ, բուժքույր-կոսմետոլոգ/ պատրաստումը ու նրանց մրցունակության բարձրացումն աշխատաշուկայում, կրթական ծրագրերի համապատասխանեցումը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման պահանջներին, ազգային և համամարդկային ոգով դաստիարակված անձի և քաղաքացու համակողմանի ձևավորումը, որը նպատակաուղղվում է անհատների, ընտանիքների, հասարակության առողջությանը և կյանքի որակի բարելավմանը:

Կրթություն. Ակադեմիայում իրականացվում են միջին մասնագիտական բժշկական 5 /հինգ/ կրթական ծրագրեր.

0912.02.5«Մանկաբարձական գործ»- մասնագետի որակավորումը՝ մանկաբարձ 0916.01.5 «Դեղագործություն»- մասնագետի որակավորումը՝ դեղագործ

0913.02.5«Քույրական գործ»- մասնագետի որակավորումը՝ բուժքույր/բուժեղբայր 0915.01.5 «Բուժական կոսմետոլոգիա» մասնագետի որակավորումը՝ բուժքույր/բուժեղբայր- կոսմետոլոգ

0911.01.5«Ատամնատեխնիկական գործ» - մասնագետի որակավորումը՝ ատամնատեխնիկ:

Վերոնշյալ բոլոր ծրագրերն իրականացվում են և միջնակարգ /լրիվ/ ընդհանուր և հիմնական ընդհանուր կրթության հիմքի վրա, առկա ուսուցմամբ, իսկ 0916.01.5«Դեղագործություն» մասնագիտության գծով՝ նաև հեռակա ուսուցում: 2021-2022 ուսումնական տարվանից Ակադեմիայում ներդրվել են վերանայված ՊԿՉ-ներ/հաստատված 2021թ. հունվարի 11-ին ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից/բոլոր մասնագիտությունների համար:

Հետազոտություն. Ակադեմիայի Ռազմավարական կարևորագույն խնդիրներից է ուսումնական և հետազոտական գործընթացների արդյունավետ փոխկապակցումը: Այդ խնդրի լուծումը կապված է Ակադեմիայի ուսումնառողների, դասախոսական կազմի կողմից իրականացվող հետազոտական աշխատանքների և ուսումնական գործընթացի կապի ակտիվացման հետ*:*

Միջազգայնացում. Արտաքին կապերի հաստատումը և միջազգայնացման գործընթացը համարվում է Ակադեմիայի ռազմավարական ծրագրի ուղղություններից մեկը և վերանայվում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրերում: Ակադեմիան խորհրդատվական կապի մեջ է ԱՀԿ-ի հետ: Համագործակցում է ՍԻԳՄԱ ՏԵՏԱ ՏԱՈՒ Ամերիկյան Բուժքույրական պատվավոր միության հետ:

Նախատեսվում է կնքել երկկողմանի համաձայնագիր ԱՄՆ-ի Տեխասի Թայլերի համալսարանական քոլեջի հետ, իրականացնել բենչմարքինգ տեղական և

միջազգային միջին մասնագիտական բժշկական կրթական հաստատությունների հետ:

Որակի ապահովում. Ակադեմիայի որակի ներքին ապահովման քաղաքականությունն ու ընթացակարգերը սահմանված են Ակադեմիայի մի շարք փաստաթղթերում և ուղղված են Ակադեմիայի առաքելության և Ռազմավարական ծրագրով սահմանված նպատակների և խնդիրների իրագործմանը: Որակի ներքին ապահովման աշխատանքային խումբը իր գործունեությունն իրականացնում է պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում շրջափուլին համապատասխան:

Աղբյուր. *վերոնշյալ տիրույթներում փաստերի դուրս բերման աղբյուր են հանդիսանում ՄՈՒՀ-ի կողմից տրամադրված փաստաթղթերը (օր՝ ինքնավերլուծություն, ռազմավարական ծրագիր, ժամանակացույց, ստորաբաժանումների պլաններ, հայեցակարգեր և այլն):*

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր:

«Էրեբունի» բժշկական ակադեմիա հիմնադրամի առաքելությունը հստակ սահմանվում է հիմնադիր փաստաթղթով՝ կանոնադրությամբ, և ձևակերպված է 2019-2025 թթ. զարգացման ռազմավարական ծրագրում (ՌԾ): Ակադեմիայի առաքելությունն է՝ «կրթության զարգացման պետական ռազմավարության շրջանակներում հանրապետության առողջապահական ոլորտի համար պետական կրթական չափորոշիչներին և միջազգային չափանիշներին համապատասխան միջին մասնագիտական կրթությամբ որակյալ մասնագետների պատրաստումը ու նրանց մրցունակության բարձրացումն աշխատաշուկայում, կրթական ծրագրերի համապատասխանեցումը երկրի սոցիալ տնտեսական զարգացման պահաջներին, ազգային և համամարդկային ոգով դաստիարակված անձի և քաղաքացու համակողմանի ձևավորումը, որը նպատակաուղղվում է անհատների, ընտանիքների, հասարակության առողջությանը և կյանքի որակի բարելավմանը»: Կանոնադրությունը հաստատվել է ԷԲԱ հիմնադրամի հիմնադրի՝ «Հրարարտ» ՍՊԸ-ի մասնակիցների 02.05.2019թ. կայացած արտահերթ ընդհանուր ժողովի որոշմամբ և ենթարկվել է լրացման և փոփոխության ԷԲԱ հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի 11.05.2021թ. կայացած նիստի որոշմամբ: Լրացումները վերաբերել են «դիմորդների՝ այդ թվում օտարերկրյա քաղաքացիների ընդունելության և ուսումնական գործընթացի իրականացմանը», ինչպես նաև «հեռավար /դիստանցիոն/ և օնլայն կրթության կազմակերպմանը»: ՌԾ-ն ներառում է նաև Ակադեմիայի տեսլականը և 11 ռազմավարական հիմնախնդիրներ:

Ակադեմիայի տեսլականն է՝ «ԷԲԱ-ն դարձնել միջին մասնագիտական բժշկական բարձր մակարդակի կրթություն ապահովող ուսումնական

հաստատություն։ Ազգային կրթությունը համադրելի դարձնել կրթության բովանդակության միջազգային չափանիշներին՝ ուսումնառողներին տրամադրել ժամանակակից պահանջները բավարարող կարողութենամետ կրթություն, որը հնարավորություն կտա ազատ տեղաշարժի և դիպլոմների համարժեքության»։

Ռազմավարական հիմնախնդիրներին են՝ մասնագետների պատրաստումը, մասնագետների պատրաստման որակի բարձրացման միջոցառումների, ուսումնադաստիարակչական աշխատանքների, ուսանողների քանակակազմի ձևավորման աշխատանքների, դասախոսների հավաքագրման և որակավորման բարձրացման միջոցառումների, ուսումնամեթոդական, գիտաստեղծագործական աշխատանքների, նյութատեխնիկական հենքի հարստացման, ակադեմիայի անձնակազմի վարձատրման ֆոնդը և ֆոնդի մեծացման հետ կապված աշխատանքների, հանրային պահմանման, միջազգային կապերի և համագործակցության զարգացման, կառավարման արդյունավետության և վարչական ծառայությունների որակի բարձրացման աշխատանքների իրականացումը։ Հիմնադրամի գործունեության նպատակները ներկայացված են Կանոնադրության 2-րդ կետում։

Շահակիցների տարբեր խմբեր մատնանշեցին ՌԾ-ի հիմնախնդիրներից միջազգային կապերի և համագործակցության զարգացման առաջնահերթությունը, որի իրականացման համար Հիմնադրամը իրականացնում է հստակ քայլեր։ Մասնավորապես, Ակադեմիան ունի համագործակցություն Sigma Theta Tau միջազգային բուժքույրական պատվավոր միության հետ, ակտիվ ներգրավված է միջազգային առցանց կազմակերպվող սեմինարներին, վեբինարներին և կոնֆերանսներին, իսկ բենչմարքինգի և փոխանակման ծրագրերի իրականացման համար մինչև 2022 թվականի ավարտը նախատեսում է կնքել պայմանագրեր արտասահմանյան ուսումնական կազմակերպությունների հետ։

Ակադեմիան՝ որպես ոչ պետական ուսումնական հաստատություն, կարևորում է ուսանողների թվաքանակի ավելացման աշխատաքները ֆինանսական ներհոսքի ավելացման և, հետևաբար, կայունության և զարգացման համար։

Ակադեմիան իրականացնում է միջին մասնագիտական կրթություն՝ ՈԱԾ-ի 5-րդ մակարդակին համապատասխան: Այս տեսանկյունից մասնագիտական կրթական ծրագրերը իրականացվում են ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից հաստատված և վերանայված մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչներով: 2021-2022 ուսումնական տարվանից ԷԲԱ-ի կողմից ՊԿՉ-ները ենթարկվել են փոփոխության, ինչը միտված է ուսանողների գործնական հմտությունների ձևավորմանը: Վերջինս համահունչ է ԷԲԱ-ի առաքելությանը:

Ակադեմիայի առաջին ռազմավարական ծրագիրը մշակվել է հիմնադիրի կողմից, և նախքան հաստատումը քննարկվել է ներքին շահակիցների շրջանում: Փորձագիտական վերլուծությունները ցույց են տալիս, որ ներքին շահակիցների կարծիքները և առաջարկությունները քննարկվում են ինչպես մանկավարժական և ուսումնամեթոդական խորհուրդներում, այնպես էլ Հոգաբարձուների խորհրդում: Քննարկումների ընթացքում հիմնականում շեշտադրվել են ուսանողների գործնական հմտությունների ձևավորումը և ակադեմիայի միջազգայնացումը՝ որպես առաջնահերթություններ:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ Ակադեմիայում դասավանդում են գործատու դասախոսներ, ովքեր՝ որպես արտաքին շահակիցներ, ներգրավվում են մասնագիտական կրթական ծրագրերի քննարկման և մշակման գործընթացին:

Ակադեմիայի ՌԾ-ում և կանոնդրության մեջ ձևակերպված առաքելության և նպատակների իրականացման գործընթացների գնահատման համար հստակ և գործուն մեխանիզմները բացակայում են: Բարելավման համար ամբիոնները պլանավորում են աշխատանքներ, որոնք քննարկվում են մանկավարժական և ուսումնամեթոդական խորհուրդներում և ներկայացվում Հոգաբարձուների խորհրդին: Առկա է 2021թ.-ին մշակված բարելավման միջոցառումների տարեկան պլան, որում ներառված են ՌԾ-ի հիմնախնդիրների իրականացման համար որոշ քայլեր:

Չնայած նրան, որ ՌԾ-ում և բարելավման միջոցառումների տարեկան պլանում հստակ նշվում են նպատակների իրականացման և զարգացման համար

գործողություններ, ձևակերպումները չեն ներառում ցուցիչներ և կատարման ժամկետներ: Մասնավորապես, նկարագրվում են մասնագետների պատրաստման և այդ գործընթացի որակի բարելավման միջոցառումների, բենչմարքինգի իրականացման գործընթացները, սակայն դրա կատարման ժամկետները սահմանված չեն: Դեռ ավելին, նշվում է մարդկային և նյութական ռեսուրսների ավելացման մասին, սակայն դրա իրականացման համար համապատասխան չափելի ցուցիչները ներկայացված չեն:

Դատողություններ:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ԷԲԱ հիմնադրամը մշակել և իրագործում է իր առաջին ռազմավարական ծրագիրը, որում սահմանված են Ակադեմիայի առաքելությունն ու հիմնախնդիրները, որոնք նպատակաուղղված են Ակադեմիայի առաջիկա զարգացմանը: Ակադեմիայի գործունեությունը և վարած քաղաքականությունը ուղղված են սահմանված առաքելության և նպատակների իրականացմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ 2021թ.-ին մշակվել է բարելավման միջոցառումների տարեկան պլան, որը նպատակ ունի մշտադիտարկելու Ակադեմիայի ռազմավարական նպատակների առաջընթացը: Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը նշում է մշակված ցուցիչների չափելի դարձնելու անհրաժեշտությունը, որն առավել նպատակային կդարձնի ՌԾ մշտադիտարկումը և հնարավորություն կտա պարբերաբար բերալավելու Ակադեմիայի գործունեությունը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ներքին շահակիցները մասնակցում են ՌԾ-ի մշակմանն և իրագործմանը: Դրական է նաև այն, որ Ակադեմիայի Հոգաբարձուների խորհուրդը հստակ պատկերացում ունի հաստատության զարգացման ուղղությունների վերաբերյալ և փնտրում է ճանապարհներ դրանց իրագործման համար:

Եզրահանգում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԷԲԱ հիմնադրամի առաքելությունը և նպատակները համապատասխանում են ՈԱՇ-ին, նրանց իրականացման համար

կատարվում են համապատասխան գործողություններ և այն, որ ներքին և արտաքին շահակիցների մեծ մասն ունեն ընդհանրական մոտեցում առաքելության իրականացման վերաբերյալ, փորձագիտական խումբը գտնում է, որ ԷԲԱ հիմնադրամի ծավալած գործունեությունը համապատասխանում է որդեգրած առաքելությանը և բավարարում է Չափանիշ 1-ի պահանջներին:

Եզրակացություն:

ԷԲԱ հիմնադրամի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 1-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր:

«Էրեբունի» բժշկական ակադեմիայում գործող կառավարման մարմիններն են հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը, հիմնադրամի գործադիր տնօրենը՝ ռեկտորը:

Հիմնադրամի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդն է, որը բաղկացած է 9 անդամներից: Հոգաբարձուների խորհրդի կազմում ընդգրկված են 2 մասնակից հիմնադրի «Հրարարտ» ՍՊԸ, 2 համագործակցող գործատու, 2 ուսանող ուսանողական խորհրդի առաջադրմամբ և 3 դասախոս մանկավարժական խորհրդի առաջադրմամբ: Խորհրդի իրավասությանն են պատկանում հիմնադրամի ռազմավարական ծրագրերի հաստատումը, հիմնադրամի բյուջեի և նրա փոփոխությունների, տարեկան հաշվետվությունների հաստատումը, ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումը, տարին մեկ անգամ

ռեկտորի հաշվետվության գնահատումը, հիմնադրամի հաստիքացուցակի հաստատումը և այլն:

Հիմնադրամի ռեկտորի իրավասությանն են պատկանում հիմնադրամի ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը:

Քոլեջում գործում են մանկավարժական և ուսումնամեթոդական խորհուրդները, որոնց գործառույթների շրջանակները ներկայացվում են կանոնակարգերի համաձայն:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Ակադեմիայի կառուցվածքը բարելավման կարիք ունի, ինչը նշում էին նաև ներքին շահակիցները, և ստորաբաժանումների միջև կապերի հստակեցման, և վարչական կազմում նոր հաստիքների ներդրման առումով:

Ակադեմիան ունի ՄԿԾ-ների իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազա, որոնք ապահովված են ժամանակակից սարքավորումներով և անհրաժեշտ նյութերով:

Կառավարման օղակների հետ փորձագիտական հանդիպման ընթացքում ֆինանսական կայունության համար շեշտադրվեց ոլորտի արդի հիմնահարցերին տեղյակ դասախոսական կազմի առկայությունը, որի արդյունքում Ակադեմիան կապահովի ուսանողների քանակի ավելացում: Ակադեմիայում կառավարչական գործընթացները կատարվում են էթիկայի սկզբունքներից ելնելով, որոնք արտահայտված են էթիկայի կանոնակարգում:

Դասախոսական կազմը ընդգրկված է նաև Ակադեմիայի կառավարման մի շարք մարմիններում, մասնավորապես՝ հոգաբարձուների խորհրդում, մանկավարժական խորհրդում, ուսումնամեթոդական խորհրդում: Հոգաբարձուների խորհրդի վերջին նիստում լսվել են ամբիոնների հաշվետվությունները համապատասխան առաջարկություններով, որոնք ընդունվել են հոգաբարձուների խորհրդի կողմից: Դասաժամերի բաշխվածությունը Ակադեմիայում իրականացվում է ամբիոնի նիստերում:

Ակադեմիայում գործում է ուսանողական խորհուրդը, որը ծառայում է ուսանողների կողմից խնդիրներ վեր հանման համար: Ուսանողական խորհրդի

կողմից բարձրաձայնված խնդիրները վերաբերվել են դասացուցակների փոփոխությանը՝ մարզերից եկող ուսանողների համար, ինչպես նաև օտար լեզվի դասընթացների ավելացմանը: Դասացուցակի հետ կապված խնդիրը լուծվել է, սակայն դեռ բաց է մնում օտար լեզվի ժամաքանակի ավելացման հարցը:

Ակադեմիայի երկարաժամկետ պլանավորումը կատարվում է հիմնադրամի 2019-2025թթ. զարգացման ռազմավարական ծրագրի հիման վրա, իսկ կարճաժամկետ պլանավորումները յուրաքանչյուր ստորաբաժանում ներկայացնում է աշխատանքային պլանների տեսքով, որոնք հաստատվում են ռեկտորի կողմից:

Դասախոսների, ուսանողների շրջանում անցկացված հարցումների, ինչպես նաև ամբիոնների և մանկավարժական խորհրդի կողմից արված առաջարկությունների հիման վրա Ակադեմիայի հոգաբարձուների խորհրդի վերջին նիստում հաստատվել է ԷԲԱ հիմնադրամի բարելավման միջոցառումների տարեկան պլանը, որտեղ շեշտադրումը դրվել է ռազմավարական հինգ ուղղությունների վրա. մասնագետների պատրաստման որակի բարձրացման ուղղված միջոցառումներ, մասնագիտական կողմնորոշման աշխատանքների ակտիվացում, դասախոսական կազմի մասնագիտական և մանկավարժական ունակությունների գնահատում և զարգացում, բենչմարքինգի իրականացում տեղային և արտասահմանյան միջին մասնագիտական բժշկական ուսումնական հաստատությունների հետ, 2020-2021 ուստարվա ուսումնական գործընթացի վերլուծության արդյունքում մարդկային և նյութական ռեսուրսների ավելացում:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ 2021թ. հաստատված բարելավման տարեկան պլանի կատարողականի հաշվետվությունը դեռ կատարված չէ:

Ակադեմիայում իրականացվել են հարցումներ ներքին շահակիցների շրջանում: Գործատուների հետ հանդիպումները համակարգված բնույթ չեն կրում սակայն առկա են բանավոր քննարկումներ ուսումնական գործընթացի վերաբերյալ:

Ակադեմիայի ռազմավարական ծրագրի 11-րդ հիմնախնդիրը վերաբերում է կառավարման արդյունավետությանը և վարչական ծառայությունների որակի բարձրացմանը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հաստատության գործառույթների մեծ մասը գտնվում է իրականացման փուլում, բարելավման փուլին է հասել միայն կրթական ծրագրերը: Քանի որ Ակադեմիան նորաստեղծ է, հաջորդ տարվանից նախատեսում են կատարել հիմնական գործընթացների ներքին գնահատում

Ակադեմիայում ՄԿԾ-ների արդյունավետության գնահատման նպատակով իրականացվում են դասալսումներ, քննությունների և ստուգարքների ժամանակ առկա են հանձնաժողովներ: Ինչպես նաև ուսանողների շրջանում հարցումներ են կատարվում յուրաքանչյուր դասախոսի վարկանիշավորման համար: Ակադեմիան առաջին շրջանավարտներն է ունեցել 2022 թվականին, և մասնագիտությունների կրթական ծրագրերի արդյունավետության վերաբերյալ միակ տեղեկատվությունը ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվություններն են, որոնք դեռ ամբիոններում քննարկման չեն դրվել: Փորձագիտական հանդիպումներից պարզվեց, որ առկա էին աշխատող շրջանավարտներ, իսկ գործատուները նշում էին նրանց հիմնային գիտելիքների բավարար մակարդակը:

Արտաքին և ներքին շահակիցներին տեղեկատվության հասանելիությունն ապահովվում է բուկլետների, կայքի, ֆեյսբուքյան էջի միջոցով: Ակադեմիայի դասախոսների, ուսանողների համար բացված են և ակտիվ գործում են խմբեր, որտեղ տեղակայվում են ուսումնական գործընթացի վերաբերյալ ամենատարբեր տեղեկատվական նյութեր: Առկա չեն տեղեկատվության հասանելիությունն ապահովող միջոցները գնահատող մեխանիզմներ:

Դատողություններ:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ Ակադեմիայի ստեղծումից հետո կարճ ժամանակահատվածում կառավարման համակարգը սկսել է ռազմավարական ծրագրի հիմնախնդիրների իրականացման գործընթացը, սահմանելով զարգացման առաջնահերթությունները, ինչպես նաև սահմանել է

տարեկան մշտադիտարկումների համակարգը։ Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը կարևոր է համարում ռազմավարական կառավարմանը զուգահեռ որակի ապահովման համակարգի զարգացման համար նախադրյալների ստեղծումը, որը հնավարություն կտա Ակադեմիայի կառավարիչների համակարգված և տվյալահեն որոշումների կայացմանը։

Փորձագիտական խումբը դրական է համարում ԷԲԱ-ի ջանքերը մարդկային ռեսուրսների համալրման տեսանկյունից, որտեղ կարևորվում է ոլորտի պրակտիկ մասնագետների ներգրավումը ուսումնական գործընթացում, ինչը կարևոր է Ակադեմիայի ռազմավարական նպատակների իրագործման համար։

Դրական է նաև այն, որ Ակադեմիան քայլեր է ձեռնարկել ՌԾ նպատակների համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի համալրման ուղղությամբ, որը հնարավորություն կտա մրցունակ շրջանավարտների պատրաստմանը։ Ակադեմիան նաև քայլեր է ձեռնարկում ֆինանսական կայունություն ապահովելու համար, ներգրավելով Հոգոբարձուների խորհրդի անդամների հնարավորությունները։

Ակադեմիայի հոգաբարձուների խորհուրդն ակտիվ ներգրված է հաստատությանը վերաբերվող որոշումների կայացման մեջ, չնայած որ նիստեր հրավիրվում են տարին մեկ անգամ։

Փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ ուսանողները և դասախոսները նույնպես մասնակցում են իրենց վերաբերող որոշումների կայացմանը. բարձրաձայնվում են խնդիրներ, որոնք քնարկվում են և լուծումներ են ստանում Ակադեմիայի կառավարման մարմիններում, ինչը դրական է կառավարման համակարգի արդյունավետության տեսակետից։

Փորձագիտական խումբը նշում է, որ համակարգված վերլուծությունների իրականացումը, ՊԻԳԲ շրջափուլի ամբողջական իրականացանացումը կնպաստեն Ակադեմիայի առաքելության և նպատակների արդյունավետ իրականացմանը և Ակադեմիայի անընդհատ բարելավմանը։

Փորձագիտական խումբը գտնում է, քանի որ հաստատության ֆինանսական մուտքերի գերակշիռ մասը ուսանողների վարձավճարներն են, ապա Ակադեմիան

ապագայում պետք է փնտրի եկամտի այլ աղբյուրներ ֆինանսական կայունության համար:

Եզրահանգում:

Հաշվի առնելով, որ ԷԲԱ-ն ապահովել է մարդկային և նյութական ռեսուրսների հիմնարար բազա, արտաքին շահակիցները ակտիվորեն ներգրավված են հաստատության կառավարման և ուսումնական գործընթացում, ունի իր առաքելությունը և ռազմավարական նպատակներն իրականացնելու համար անհրաժեշտ կառավարման համակարգ, որոշումների կայացումը հիմնված է էթիկայի կանոնակարգի վրա, փորձագիտական խումբը գտնում է, որ հաստատությունը բավարարում է չափանիշ 2-ի պահանջներին:

Եզրակացություն:

Փորձագիտական խումբը ԷԲԱ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 2-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր:

Ակադեմիայում իրականացվում են միջին մասնագիտական բժշկական 5 կրթական ծրագրեր. «Մանկաբարձական գործ», «Քույրական գործ», «Ատամատեխնիկական գործ», «Բուժական կոսմետոլոգիա» և «Դեղագործություն»: ԷԲԱ-ում իրականացվող բոլոր կրթական ծրագրերը մշակվել են ՀՀ Կառավարության կողմից հաստատված միջին մասնագիտական կրթության պետական չափորոշիչների հիման վրա և համապատասխանում են որակավորումների ազգային շրջանակի հինգերորդ մակարդակին: Վերոնշյալ

բոլոր ծրագրերն իրականացվում են և միջնակարգ /լրիվ/ ընդհանուր և հիմնական ընդհանուր կրթության հիմքի վրա:

ԷԲԱ-ում ներդրված է առարկայական կրթական ծրագրերի վերանայման, կազմման և մշտադիտարկման ուղեցույց, որում հստակ բացատրվում է, թե ինչպես սահմանել ծրագրի նպատակը և վերջնարդյունքները, ընտրել դասավանդման և ուսումնառության մեթոդները, կատարել ուսանողների գնահատում:

Ինքնավերլուծության մեջ նշվում է, որ 2021-2022 ուստարվանից ուսումնական գործընթացը «Քույրական գործ» մասնագիտությամբ իրականացվում է վերանայված ՊԿՉ-ով: Փորձագիտական խմբի այցի և փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ «Բուժական կոսմետոլոգիա» և «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտությունները նույնպես իրականացվում են վերանայված ՊԿՉ-ներով: Ամբիոնի նիստերի քննարկումներից հետո առաջարկվել է «Քույրական գործ», «Բուժական կոսմետոլոգիա», «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտությունների ուսումնական պլանում ընդհանուր հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և առանցքային հմտությունների առարկայախմբերին տրամադրված ժամաքանակների հաշվին ավելացնել ուսումնական, արտադրական և նախաավարտական պրակտիկաներին տրամադրվող ժամաքանակները՝ համապատասխանեցնելով միջազգային չափանիշներին: Վերը նշված մասնագիտությունների ուսումնական պլանում ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական կրթամասերում գործնական և լաբորատոր պարապումքների ժամերը հիմնականում գերազանցում են տեսական պարապունքների ժամերին, որի արդյունքում հստակ ձևավորվում են մոդուլի վերջնարդյունքները:

Ուսումնական պլանում կան նախասիրական առարկաներ (ՊԿՉ-ի համաձայն), որոնք ինչպես պարզվեց փորձագիտական խմբի հանդիպումներից չեն իրականացվել ամբիոնների կողմից, ուսանողները դրանց ընտրությանը չեն մասնակցել:

Դասավանդման և ուսումնառության մեթոդները, համապատասխան հանձնարարականները ընտրում են դասախոսները՝ դրանք

համապատասխանեցնելով դասընթացի արդյունքներով պայմանավորված կատարման չափանիշներին։

Ըստ ինքնավերլուծության մեծ տեղ է տրվում ուսումնառության հետևյալ մեթոդներին. իրավիճակային խնդիրների լուծմանը, դերային խաղերին մասնակցությանը, անհատական և թիմային աշխատանքի ներկայացմանը։

Օրինակ՝ «Բուժական կոսմետոլոգիա» մասնագիտության հաղորդակցություն մոդուլի ուսուցման ընթացքում մեծ կիրառում ունեն կոնֆլիկտային հաճախորդ և կոսմետոլոգ, կասկածամիտ հաճախորդ և կոսմետոլոգ, իսկ «Քույրական գործի հիմունքներ» մոդուլի ուսուցման ընթացքում՝ բուժքույր-բուժքույր, բուժքույր-պացիենտ, բուժքույր-հիվանդի հարազատներ, հորիզոնական և ուղղահայաց միջանձնային փոխհարաբերություններ արտահայտող իրավիճակային խնդիրները և դերային խաղերը՝ փոփոխելով հարցադրումները և հնարավորություն տալով, որ ուսանողը սկսի մտածել, վերլուծել, քննադատել, կիրառել և լուծել խնդիրները։

Փորձագիտական հանդիպումներից պարզվեց, որ ուսանողների ցանկությամբ դասախոսության տրման ձևերը կարող են լինել տարբեր։ Օգտագործում են նաև խմբային մեթոդը, որի արդյունքում խումբն է գնահատում իրականացնում։ Կիրառում են նաև նախագծային ուսուցման մեթոդներ, որը լուսաբանվել է Ակադեմիայի կայքէջում։

Covid 19 համավարակով պայմանավորված՝ կրթությունը իրականացվել է առցանց, սակայն որոշ ժամանակ անց դասընթացները իրականացվել են Ակադեմիայում՝ փոքր խմբերով։ Առցանց ուսուցման անցնելը խթան է հանդիսացել է դասախոսներին վերանայել դասավանդման և ուսումնառության մեթոդները, մշակել հանձնարարականների նոր փաթեթներ նկարագրված ուսումնառության արդյունքների ապահովման համար։

Փորձագիտական խմբի այցի ընթացքում պարզվեց, որ դասավանդող պրակտիկ բժիշկները դասընթացի շրջանակներում ուսանողներին են ներկայացնում նաև ոլորտի նորամուծությունները։

Ակադեմիայում ուսանողների գնահատումը կատարվում է «Ուսանողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների գնահատման կանոնակարգ»-ով, ինչպես նաև առկա են «Ուսումնառողների գիտելիքների գնահատման արդյունքների բողոքարկման կանոնակարգը» և «Ակադեմիական ազնվության և գրագողության կանխարգելման կանոնակարգը»:

Ըստ ինքնավերլուծության՝ գնահատման գործընթացը գտնվում է վերանայման փուլում ուսումնամեթոդական մասի կողմից առավել անաչառ, օբյեկտիվ դարձնելու նպատակով, մշակման փուլում է ուսանողների գնահատման էլեկտրոնային տարբերակը: Գնահատման գործընթացին մասնակից են լինում նաև ուսանողները՝ պատասխանելով համապատասխան հարցումներին և հարցաթերթիկներին:

Փորձագիտական հանդիպումներից պարզվեց, որ գնահատականի բողոքարկման դեպքեր եղել են, որոնք հենց տեղում քննարկվել են դասախոսի հետ և լուծում ստացել:

Հստակեցված է գնահատման քաղաքականությունը գործնականի (կատարողականի) և տեսական մասի գնահատման տեսքով, և գնահատումը շատ հաճախ իրականացվում է այս երկու գործառույթի փոխկապակցվածությամբ, ինչպես նաև քննությունները վերահսկվում են քոլեջի ղեկավարության կողմից:

Ըստ ինքնավերլուծության՝ Ակադեմիան խիստ կարևորում է միջազգային կապերի հաստատումն ու զարգացումը, բուժքույրական կրթությունը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու գործընթացը: Այդ իսկ պատճառով ընթացքի մեջ է ակադեմիայի և այլ ուսումնական հաստատությունների միջև ուսանողների փոխանակումն ու շարժունությունն ապահովող համաձայնագրերի կնքման գործընթացը /Միջազգային պայմանագիր ԱՄՆ Տեխասի Թայլեր քաղաքի համալսարանական քոլեջի հետ/: Իսկ 2022-2023 ուստարվանից նախատեսվում է իրականացնել բենչմարքինգ հարևանությամբ գտնվող Երևանի հայ-ամերիկյան Էրեբունի պետական բժշկական քոլեջի «Քույրական գործ», «Ատամնատեխնիկական գործ», «Բուժական կոսմետոլոգիա» մասնագիտությունների կրթական ծրագրերի հետ:

Յուրաքանչյուր ուսանողի տրվում է պրակտիկայի օրագիր, որն իրենից ներկայացնում է ԱՄՆ-ի բժշկական քոլեջներում կիրառվող Medical Surgical Handbook–ի թարգմանված, տեղայնացված և ուսումնամեթոդական խորհրդի կողմից հաստատված օրինակը: Պրակտիկայի օրագրում ուսանողը յուրաքանչյուր օրվա ավարտին մանրամասն ներկայացնում է իր կատարած գործողությունները, մանիպուլացիաների տեսակները, ինչպես նաև թե ինչպիսի գործընթացների են մասնակցություն ունեցել:

Ըստ ինքնավերլուծության՝ ՄԿԾ-ների մշտադիտարման գործընթացները շրջափուլային են՝ կատարվում են տարին մեկ անգամ ուսումնամեթոդական մասի կողմից, ինչպես նաև այս ուսումնական տարվանից սկսած առաջին շրջանավարտների պետական ամփոփիչ քննություններից հետո, երբ ամփոոիչ ատեստավորման հանձնաժողովի կողմից կքննարկի շրջանավարտների մասնագիտական պատրաստվածությունը և համապատասխանությունը պետական կրթական չափորոշիչների պահանջներին:

Դատողություններ:

ԷԲԱ-ում գործող կրթական ծրագրերը ընդհանուր առմամբ համապատասխանում են Ակադեմիայի առաքելությանը: Չնայած այն հանգամանքին, որ Ակադեմիան այս տարի է առաջին շրջանավարտներին թողարկում, փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ գործող մասնագիտությունների կրթական ծրագրերը վերանայվել են: Մասնավորապես, նրանցում ավելացել են գործնական և պրակտիկային տրամադրվող ժամաքանակները, ինչը ապահովում է աշխատաշուկայի պահանջներին համապատասխան գործնական կարողություններ և հմտություններ ունեցող մասնագետների պատրաստումը և նպաստում է Ակադեմիայի առաքելության իրականացմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում դասավանդման և ուսումնառության բազմազան մեթոդների կիրառումը, որի արդյունքում ուսանողների մոտ ձևավորվում են գիտելիքի վրա հիմնված գործնական հմտություններ: Դեռ ավելին, ուսանողները որոշ դեպքերում մասնակցում են

դասավանդման մեթոդի ընտրությանը, ինչը վկայում է ուսանողակենտրոն ուսուցման մասին:

Դրական է, որ ԷԲԱ-ում առկա է հստակ քաղաքականություն և սահմանված ընթացակարգ ուսանողների գիտելիքների գնահատման և բողոքարկման գործընթացներում, ինչպես նաև խիստ հսկողություն քննությունների օբյեկտիվ անցկացման համար: Դրական է, որ քննությունների ժամանակ գնահատվում են ոչ միայն տեսական գիտելիքները, այն նաև առկա են գործնական առաջադրանքներ, որը հնավարություն է տալիս ստուգելու ուսանողների պրակտիկ կարողությունները:

Հաշվի առնելով բժշկական մասնագիտությունների առանձնահատկությունները՝ պրակտիկ բժիշկների ներգրավումը ուսումնական գործընթացին, և դրանով պայմանավորված ոլորտի նորամուծությունների ներկայացումը կրթական ծրագրի շրջանակներում, ապահովվում է մասնագիտությունների արդիականությունը: Ակադեմիայում նախատեսվող ուսումնական պլանների բենչմարքինգի գործընթացը կարող է լավ փորձ հանդիսանալ տեղական միջին մասնագիտական նմանատիպ ուսումնական հաստատությունների համար:

Եզրահանգում:

Հաշվի առնելով, որ Ակադեմիայում գործող մասնագիտական կրթական ծրագրերը համահունչ են պետական կրթական չափորոշիչներին, նրանց դասավանդման և ուսումնառության համար կիրառվում են բազմազան մեթոդներ՝ որոնց մի մասը բավականին արդիական են և առաջադեմ, հանձնարարականների բազմազանությունը և դրանց համապատասխանությունը մասնագիտության ելքային պահանջներին, գործատուների հետ համագործակցությունը, և այն, որ ընթացքի մեջ է բուժքույրական կրթությունը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու գործընթացը, փորձագիտական խումբը գտնում է, որ ԷԲԱ-ն հիմնականում համապատասխանում է Չափանիշ 3-ի պահանջներին:

Եզրակացություն:

Փորձագիտական խումբը ԷԲԱ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 3-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր:

ԷԲԱ-ում առկա է «Ակադեմիայի ընդունելության կանոնակարգ», ըստ որի ուսանողների ընդունելությունը կազմակերպվում է մասնագիտական քննությամբ (կենսաբանություն առարկայից): Ակադեմիան ուսանողների հավաքագրման համար պարբերաբար կազմակերպում է այցեր ինչպես Երևանի, այնպես էլ մարզերի դպրոցներ:

ՄՈՒՀ-ում կազմակերպվում են բաց դռների օրեր, որին մասնակցում են դպրոցականները: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ Ակադեմիայի գործունեության ընթացքում դեռևս մեկ անգամ է կազմակերպվել նմանատիպ միջոցառում:

ԷԲԱ-ն իր ուսանողների կրթական կարիքները հիմնականում վեր է հանում հարցումների միջոցով, որոնք կատարվում են յուրաքանչյուր կիսամյակ: Հարցաշարը իր մեջ ներառում է հարցեր Ակադեմիայի կրթական միջավայրի, ռեսուրսային հագեցվածության, դասախոսական կազմի և պրակտիկ պարապմունքների վերաբերյալ: Սոց. հարցումների արդյունքները վերլուծվում են ամբիոնի նիստերում, սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ վերլուծությունները դեռևս փաստաթղթավորված չեն:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ուսանողները իրենց կրթական կարիքները բարձրաձայնելու նպատակով ազատ կարողանում են դիմել ամբիոնի վարիչներին և բաժնի վարիչին: Ուսանողների կարիքների վերհանման մեկ այլ կարևոր կառույց է ուսանողական խորհուրդը: Կառույցը ձևավորվել է 2019

թվականին և ունի համապատասխան կանոնակարգ։ Ըստ կանոնակարգի ՈւԽ-ն պարտավոր է տարին առնվազն 4 անգամ գումարել նիստ, մինչդեռ փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ նիստերը գումարվում են միայն ուսանողներից ստացած առաջարկությունների դեպքում։ Ուսանողները իրենց առաջարկները և բողոքները ներկայացնում են ուսխորհուրդ, որն անմիջապես գումարում է նիստ՝ խնդիրը քննարկելու համար։ Ուսանողական խորհրդի անդամները վերհանված խնդիրները ներկայացնում են բանավոր կարգով։ Ուսանողական խորհրդի անդամներ ընտրվում են բոլոր կուրսերի ավագները և առավել ակտիվ ուսանողները։

Հարկ է նաև նշել, որ յուրաքանչյուր կուրս ունի viber-chat-եր, Google classroom-ներ, ինչպես նաև բոլոր ուսանողներին տրամադրված է ռեկտորի մեյլը, որոնց միջոցով ուսանողները կարող են արտահայտել իրենց հուզող հարցերը։

Ակադեմիան ունի լրացուցիչ կրթական, խորհրդատվական ծառայությունների իրականացման կանոնակարգ և ժամանակացույց։ Ըստ Ակադեմիայի կողմից արված հարցման արդյունքների ուսանողների մեծ մասը (92%) տեղեկացված է խորհրդատվական ծառայություններից, սակայն 48%-ն է գոհ դրանցից։ Ըստ ինքնավերլուծության՝ խորհրդատվական պարապմունքները անց են կացվում միջանկյալ, ամփոփիչ ատեստավորման քննություններից առաջ։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողները հիմնականում խորհրդատվության համար դիմում են կուրսղեկներին։

Ակադեմիան վարչական աշխատակազմին դիմելու համար մշակել է խորհրդատուների աշխատանքային ժամանակացույց։ Ըստ ժամանակացույցի յուրաքանչյուր օր ժամը 15:00-ից հետո ուսանողները հնարավորություն ունեն դիմել պրոռեկտորին, իսկ յուրաքանչյուր ուրբաթ օր ժամը 12:00-ից 14:00 ժամանակահատվածում՝ ռեկտորին։ Բաժնի վարիչին կարող են դիմել յուրաքանչյուր օր, ցանկացած ժամի։ Սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողները հազվադեպ են դիմում ռեկտորին, պրոռեկտորին, քանի որ խնդիրների մեծ մասը լուծվում է կուրսղեկների, ամբիոնի վարիչների օգնությամբ։

Ակադեմիան ունի կարիերայի ուղղորդման կենտրոն, որն ունի աշխատակարգ: Պայմանավորված Ակադեմիայի նորաբաց լինելով և ռեսուրսների ոչ համաչափ բաշխման հետ, կարիերայի կենտրոնի գործառույթները իրականացրել է Ակադեմիայի պրոռեկտորը, սակայն փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ տվյալ հաստիքն արդեն իսկ համալրվել է մեկ այլ աշխատակցով: Կարիերայի կենտրոնի ղեկավարը պարբերաբար կազմակերպում է հանդիպումներ ավարտական կուրսերի ուսանողների հետ, օգնում է ուսանողներին կազմել ինքնակենսագրականներ:

ԷԲԱ-ում ուսանողների հետազոտական աշխատանքները ներկայացվում են ռեֆերատների և ինքնուրույն աշխատանքների ձևով: Ռեֆերատների թեմաները ընտրվում են դասախոսական կազմի կողմից և տրվում ուսանողներին: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ եղել են դեպքեր, երբ հետազոտության թեման առաջարկվել է ուսանողի կողմից, և ողջ խումբը իրականացրել է տվյալ թեմայի ուսումնասիրությունը:

Ակադեմիան «Քույրական գործ» մասնագիտությունում ներդրել է «Գիտական հետազոտությունը քույրական գործում» 18 ժամանոց դասընթացը, որը նպատակ ունի ուսանողներին օգնել կատարել հետազոտական աշխատանքներ:

Ըստ ինքնավերլուծության Ակադեմիան որպես ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման մեխանիզմ համարում է ռեկտորի տարեկան հաշվետվությունը, դասախոսական և վարչական կազմի հաշվետվությունները, ինչպես նաև ուսանողների շրջանում անցկացվող հարցումները: Հարկ է նշել, որ հարցումների վերլուծություն փաստաթղթային տարբերակով լիարժեքորեն չի կատարվում:

Դատողություններ:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ԷԲԱ-ն ունի ուսանողների հավաքագրման, ընդունման և ընտրության հստակ սահմանված կանոնակարգեր և մեխանիզմներ: Ողջունելի է, որ ԷԲԱ-ն կազմակերպում է այցեր

Երևանի և մարզերի դպրոցներ, որոնք նպաստում են ուսանողների թվաքանակի աճին:

Դրական է նաև, որ ՄՈՒՀ-ը ունի ուսանողների կրթական կարիքների վերհանման քաղաքականություն և մեխանիզմեր (հարցումներ): Սակայն մտահոգիչ է, որ Ակադեմիան դեռևս չի իրականացրել սոցիոլոգիական հարցումների փաստաթղթային վերլուծություններ:

Ողջունելի է նաև այն փաստը, որ դասախոսները կամավորական սկզբունքով հետ մնացած կամ ուսումնառության նյութը բաց թողած ուսանողների համար դասերից հետո կազմակերպում են լրացուցիչ պարապմունքներ, որոնք նպաստում են ուսանողների առաջընթացին:

Դրական է համարվում այն, որ Ակադեմիան ունի կարիերայի ստորաբաժանում, որը արդեն իսկ ակտիվ աշխատանքներ է իրականացնում ներքին և արտաքին շահակիցների շրջանում, ինչը հետագայում կնպաստի շրջանավարտների աշխատաշուկայում առավել ակտիվ իրացվելու գործընթացին:

ՄՈՒՀ-ը միտված է ուսանողներին ներգրավվել հետազոտական աշխատանքներում: Դրական է այն, որ ուսանողներին տրվող առաջադրանքները ունեն այնպիսի բովանդակություն, որոնք միտված են ուսանողների մոտ ինքնուրույն և քննադատական մտածողության ձևավորմանը:

Դրական է նաև այն փաստը, որ ԷԲԱ-ն «Քույրական գործ» մասնագիտությունում ներդրել է հետազոտական դասընթաց, որի միջոցով փորձում է ուսանողներին ծանոթացնել հետազոտական աշխատանք գրելու կանոններին:

Դրական է համարվում այն, որ ՄՈՒՀ-ում առկա ուսանողական խորհուրդը ներգրավված է Ակադեմիայում առկա գրեթե բոլոր գործընթացներում և իրականացնում է աշխատանքներ ուղղված ուսանողների կրթական կարիքների վերհանմանը, ինչպես նաև ակտիվ մասնակցություն է ունենում կազմակերպչական բոլոր աշխատանքներում:

Եզրահանգում:

Հաշվի առնելով, որ ԷԲԱ-ն ունի ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության հստակ մեխանիզմներ, ուսանողների կրթական կարիքների վերհանման մեխանիզմեր և ուղիներ, ուսանողները հնարավորություն ունեն խորհրդատվություն ստանալու նպատակով դիմել ինչպես դասախոսական, այնպես էլ վարչական աշխատակազմին, Ակադեմիան ունի Ուսանողական խորհուրդ, ինչպես նաև ՄՈՒՀ-ը ներգրավվում է ուսանողներին հետազոտական աշխատանքներում՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԷԲԱ-ն բավարարում է չափանիշ 4-ի պահանջներին։

Եզրակացություն:

Փորձագիտական խումբը ԷԲԱ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 4-ի պահանջներին գնահատում է **բավարար։**

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր։

Ըստ ինքնավերլուծության՝ պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության հիմքում ընկած են ՀՀ Աշխատանքային օրենսգիրքը, ՀՀ ԿԳՄՍՆ-ից ստացված հրամանները և կարգերը՝ սահմանված որպես «Դասախոսական կազմի աշխատանքի ընդունման, թափուր տեղերի մրցութային կարգ», իսկ գործընթացները կանոնակարգվում են Ակադեմիայի կանոնադրությամբ, «Ներքին կարգապահական կանոններ» փաստաթղթով:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ընդունելությունը կատարվում է ըստ սահմանված կարգի, պրոֆեսորադասախոսական կազմն աշխատանքի է ընդունվում հարցազրույցով՝ ըստ համապատասխան մասնագիտական կրթության

և որակավորման, կնքվում են պայմանագրեր: Առկա է «Դասախոսի պաշտոնեական հրահանգ», որտեղ նկարագրված են պաշտոնին ներկայացվող պահանջները և հիմնական գործառույթները: Թափուր տեղերի վերաբերյալ տրվում են հայտարարություններ ԷԲԱ հիմնադրամի ֆեյսբուքյան էջում և կայքէջում:

Բացի հիմնական դասավանդողներից, Ակադեմիայում հրավիրվում են նաև համատեղությամբ դասավանդող պրակտիկ բժիշկներ Էրեբունի ԲԿ-ից, մասնագիտացված դեղատներից, ատամնաբուժարաններից, կոսմետոլոգիական կենտրոններից, ինչպես նաև հարակից գտնվող Երևանի հայ-ամերիկյան «Էրեբունի» պետական բժշկական քոլեջից: Հրավիրյալ դասախոսները հիմնականում հանդիսանում են նաև գործատուներ:

Ակադեմիայում թափուր աշխատատեղի մրցույթի հայտարարության մեջ նշվում են աշխատանքին ներկայացվող պահանջները: Դրանք են՝ կրթությունը, մասնագիտությունը, աշխատանքային փորձը, անգլերեն լեզվի իմացությունը: Ընդհանուր առմամբ, Ակադեմիայում դասավանդում են մագիստրոսի և գիտության թեկնածուի աստիճան ունեցող դասախոսներ: Չնայած նրան, որ նշվում է, թե ինչ որակներ պետք է ունենա դասախոսն աշխատանքի ընդունվելիս, ըստ կրթական ծրագրերի պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները հստակ սահմանված չեն: Ակադեմիան կապի մեջ է տարբեր բժշկական և մասնագիտացված կենտրոնների հետ և նախապատվություն է տալիս պրակտիկ կարողություններով փորձառու մասնագետներ ընդունելուն: Դասավանդման հմտությունների ձեռքբերման համար Ակադեմիայում գործում է «Սկսնակ դասախոսների դպրոց», որտեղ սկսնակ դասավանդողներին և պրակտիկ բժիշկներին տրվում է խորհրդատվություն ուսումնական գործընթացի կազմակերպման, դասավանդման և մատենավարության վերաբերյալ:

Դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար Ակադեմիայում առկա է «Դասախոսների մասնագիտական գործունեության գնահատման չափանիշներ» փաստաթուղթ: Վարկանշային գնահատման համակարգը (առավելագույնը 200 բալ) ներառում է մասնագիտական պատրաստվածությունը (115 բալ), բաց դասալսումը (35 բալ), աշխատանքային կարգապահությունը (±25

բալ), մասնակցությունը Ակադեմիայի ընդհանուր աշխատանքներին (10 բալ) և ուսանողների կարծիքը (10 բալ)։ Ըստ վարկանիշային գնահատման, որոշ դասախոսներ, ովքեր հավաքել են բարձր բալեր, ստացել են «Լավագույն դասախոս» տիտղոսը, և տրվել են պատվոգրեր։ Ակադեմիայում ներդրվել է նաև «ՄՈՒՀ-երի ղեկավար և մանկավարժական աշխատողների խրախուսման և գնահատման ուղեցույց»։ Դասախոսների հետ հանդիպման ընթացքում պարզվեց, որ դասախոսները մեծամասամբ տեղյակ չեն վարկանիշային գնահատման արդյունքներից և ֆինանսական խրախուսումներ չեն ստացել։ Դեռ ավելին, հստակ կանոնակարգված չէ, թե ինչ հաճախականությամբ է իրականացվում դասախոսական կազմի գնահատումը։ Բացի այդ, Ակադեմիայում առկա է նաև «Պրոֆեսորադասախոսական կազմի ատեստավորման կարգ»-ը, որը, ըստ ինքնավերլուծության, գտնվում է ներդրման փուլում։

Ակադեմիայի ՌԾ-ի հիմախնդիրներից է «Մասնագետների հավաքագրման և որոկավորման բարձրացման միջոցառումներ»-ի իրականացումը։ Այս տեսանկյունից Ակադեմիան մշակել է 2021-22 ուս. տարվա համար «Դասավանդողների կատարելագործման թեմաներ և միջոցառումների ժամանակացույց», ինչը հաստատվել է ուսումնամեթոդական խորհրդի կողմից ուսումնական տարվա սկզբում։

Ինքնավերլուծության մեջ նշվում է, որ «Ակադեմիայի ուսումնամեթոդական մասը շարունակում և զարգացնում է դասախոսների պարբերական վերապատրաստումները՝ կրթական նոր տեխնոլոգիաներին տիրապետելու և դրանք Ակադեմիայի ուսումնական գործընթացում ներդնելու, էլեկտրոնային ուսուցման դասընթացներ և կրթական բարեփոխումներ իրականացնելու ուղղությամբ»։

Ակադեմիան մասնակցում է միջազգային սեմինարներին, ինչը կատարելագործում է դասախոսների մասնագիտական գիտելիքները։ Ակադեմիայում դասավանդող դասախոսների համար կազմակերպվում են նաև անգլերեն լեզվի դասընթացներ, որոնք իրականացվում են Ակադեմիայի անգլերեն լեզվի մասնագետի կողմից։ Կազմակերպվում են նաև սկսնակ և փորձառու

մասնագետների փոխադարձ դասալսումներ, որոնց արդյունքները քննարկվում են ամբիոնների նիստերում: Ակադեմիայում նաև կազմակերպվել է արտերկրից ժամանած մասնագետի կողմից դասընթաց դասախոսների և ուսանողների համար միջազգային փորձի ներդրման նպատակով: Ակադեմիան պլանավորում է շարունակական դարձնել նմանատիպ միջոցառումները:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ Ակադեմիայի գործունեության ընթացքում որոշ դասընթացների իրականացման դեպքում նկատվել է դասախոսների հոսունություն, սակայն վերջինս չի անդրադարձել ուսումնական գործընթացի որակի վրա: Ակադեմիայի ղեկավարության խոսքերով դասախոսական կազմի կայունության խնդիրներից է ցածր աշխատավարձը: Այնուամենայնիվ, Ակադեմիայի ղեկավար կազմի ունեցած կապերի շնորհիվ հրավիրվում են հմուտ մասնագետներ՝ կրթական ծրագրերի դասընթացներին համապատասխան: Դասընթացների փոքր մասն ունեն տվյալ ոլորտում դասավանդող մեկից ավել դասախոսներ: Այնուամենայնիվ, փոխարինող դասախոս չլինելու դեպքում բաց թողնված դասընթացները լրացվում են կամ կազմակերպվում են Zoom հարթակում:

Դասախոսական կազմի մեծամասնությունն Ակադեմիայում հիմնական ժամավճարով աշխատակիցներ են:

Ակադեմիայի վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմը սակավաթիվ է, և առկա է պարտականությունների անհավասարաչափ բաշխում: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ Ակադեմիայի աշխատանքային գործունեության ընթացքում, երբ սովորող ուսանողների քանակը փոքր է եղել, աշխատակազմի սակավությունը չի անդրադարձել ուսումնական գործընթացի վրա: Մինչդեռ ուսանողների թվաքանակի մեծացմանը զուգահեռ ղեկավարությունը պլանավորում է համալրել վարչական և ուսումնաօժանդակ կազմը:

Դատողություններ:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ Ակադեմիան ունի անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական կազմի ընտրության գործուն մեխանիզմ: Դեռ ավելին, պրակտիկ բժիշկներին

ուսումնական գործընթացին ներգրավելու նպատակով գործում է «Սկսնակ դասախոսների դպրոց»-ը։ Բացի այդ, պրակտիկ բժիշկների և գործատուների ներգրավումը ուսումնական գործընթացին նպաստում է ոչ միայն դասախոսների փորձի փոխանակմանը, այլև ուսանողներին մասնագիտական պրակտիկ հմտությունների փոխանցմանը և աշխատաշուկայում շրջանավարտների մրցունակության բարձրացմանը։ Չնայած նրան, որ Ակադեմիայում ՊԴ կազմի հոսունությունը ցածր է, այնուամենայնիվ ֆինանսական ապահովվածության վիճակը՝ որպես ոչ պետական մասնագիտական ուսումնական հաստատություն, ապագայում ուսանողների թվաքանակի աճին զուգահեռ, հավանական է՝ կխոչընդոտի Ակադեմիայի ՊԴ կազմի կայունությանը։

Դրական է, որ Ակադեմիայում ներդրված են ՊԴ կազմի գնահատման և խրախուսման մեխանիզմներ և ընթացակարգեր, որոնք նպաստում են դասախոսական կազմի մոտ խնդիրների բացահայտմանն ու շարունակական բարելավմանը։

Փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ Ակադեմիան մեկնարկել է դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի միջոցառումների շարք, որոնց ժամանակ քննարկվում է նաև միջազգային փորձը։ Այս միջացառումների շարունակական դարձնելը կնպաստի դասախոսների մասնագիտական հմտությունների կատարելագործմանը։

Փորձագիտական խումբը դրական է համարում դասախոսների շրջանում անգլերենի մակարդակի բարձրացման համար դասընթացների կազմակերպումը, ինչն ուղղված է ՌԾ հիմնախնդիրներից Ակադեմիայի միջազգայնացմանը։

Չնայած նրան, որ վարչական և ուսումնաօժանդակ կազմի սակավությունը մինչ այժմ չի անդրադարձել ուսումնական գործընթացի որակի վրա, դրա հետագա համալրման անկատարությունը և պարտականությունների անհամաչափ բաշխումը ուսանողների թվաքանակի մեծացման և շրջանավարտների առկայության դեպքում կհանգեցնի որոշ գործընթացների ոչ արդյունավետ իրականացմանը։

Եզրահանգում։

Հաշվի առնելով կրթական ծրագրերի իրականացման համար համապատասխան որակավորմամբ մասնգետների ընտրության քաղաքականությունը և պրակտիկ բժիշկների ներգրավվածությունը, դասախոսների վերապատրաստման համար որոշ գործընթացների իրականացումը, սկսնակ դասախոսների կատարելագործման մեխանիզմների առկայությունը և վարչական և ուսումնաօժանդակ կազմի համալրման ձգտումը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԷԲԱ-ն բավարարում է Չափանիշ 5-ի պահանջներին:

Եզրակացություն:

ԷԲԱ հիմնադրամի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 5-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր:

«Էրեբունի» բժշկական ակադեմիան, ելնելով իր առաքելությունից և ռազմավարական ծրագրի /6-րդ կետ/ հիմնախնդիրներից կարևորում է գիտահետազոտական և գիտաստեղծագործական աշխատանքների իրականացումը դասախոսական կազմի և ուսանողների ներգրավվածությամբ: ԷԲԱ-ն հետազոտական ոլորտի համար առանձնացրել է հետևյալ նպատակները.

- խթանել դասախոսական կազմի մասնագիտական և մանկավարժական որակավորումը՝ դասախոսական կազմից պահանջելով գիտաստեղծագործական աշխատանքներ, դասագրքերի կազմում, թարգմանչական, հետազոտական աշխատանքներ,

- ստեղծել բուժքույրական վիճակագրական հետազոտություններ, ներհիվանդանոցային համաճարակային վերահսկողության ընթացիկ աշխատանքների մատյան,
- տպագրել «Աշխատանքային անվտանգությունը» քույրական գործում, «Ներհիվանդանոցային համաճարակային վերահսկողություն», «Առողջ ապրելակերպ» թեմաներով ուսումնամեթոդական ձեռնարկներ:

Հետազոտական ոլորտի զարգացման համար Ակադեմիան իր բյուջեից տրամադրում է 0.3%: ԷԲԱ-ում առկա է կարճաժամկետ ծրագիր, որն ընդգրկված է 30.08.2021թ.-ի ԷԲԱ հիմնադրամի բարելավման միջոցառումների տարեկան պլանում: Կատարված աշխատանքների վերլուծությունը ցույց է տալիս, որ դասախոսական կազմի կողմից իրականացված հետազոտությունների արդյունքները և նորույթները ներառվել են համապատասխան մոդուլային ծրագրերում, մասնավորապես՝ Covid 19 համավարակին վերաբերվող տեղեկատվությունը ներդրվել է «Քույրական գործը վարակիչ հիվանդությունների ժամանակ» մոդուլի մեջ:

Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ ուսանողների կողմից կատարվում են հետազոտական և վերլուծական աշխատանքներ միջին մասնագիտական կրթության մակարդակին համապատասխան: Ինչպես ընթացիկ, այնպես էլ ինքնուրույն հանձնարարականները ներառում են այնպիսի առաջադրանքներ և իրավիճակային խնդիրներ, որոնք հնարավորություն են տալիս ուսանողների մոտ ձևավորելու հետազոտական կարողություններ: Շատ հաճախ ինքնուրույն առաջադրանքների թեմաների ընտրությունը իրականացվում է ուսանողի կողմից: Մասնավորապես՝ «Քույրական գործ» մասնագիտության ուսանողները իրենց ընտրությամբ իրականացրել են «Կրծքագեղձի քաղցկեղ» հիվանդության թեմայով հետազոտական աշխատանքներ, որի արդյունքները հետագայում քննարկվել և ամփոփվել են ամբիոնում: «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության ուսանողները հետազոտական աշխատանքները իրականացրել են ատամնաշարվածքի տարբեր տեսակների դեպքում անշարժ և

շարժական պրոթեզների պատրաստմամբ։ Ուսանողների պատրաստած պրոթեզները կիրառվում են պացիենտների կողմից։ Իսկ «Կոսմետոլոգիա» մասնագիտության ուսանողները ուսումնասիրել են տարբեր մաշկային հիվանդությունների ժամանակ իրականացվող բուժման առանձնահատկությունները։ Նմանատիպ աշխատանքների իրականացումը խրախուսվում է դասախոսական կազմի կողմից։

Շեշտադրելով ուսանողների մոտ վերլուծական կարողությունների զարգացումը՝ Ակադեմիայում բոլոր կրթական ծրագրերի շրջանակներում իրականցվում են նաև դերային խաղեր, ինչպես օրինակ՝ բուժքույր-պացիենտ, դեղագործ-հաճախորդ, բուժքույր-բուժքույր, բուժքույր-հիվանդի հարազատներ, հորիզոնական և ուղղահայաց միջանձնային փոխհարաբերություններ արտահայտող իրավիճակային խնդիրները։

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ Ակադեմիան խրախուսում է ոչ միայն ուսանողների մոտ հետազոտական և վերլուծական կարողությունների զարգացումը, այլ նաև դասախոսական կազմի հետազոտական աշխատանքներում ներգրավվածությունը։ Ակադեմիան ստեղծում է նպաստավոր պայմաններ, տրամադրում համապատասխան ռեսուրսներ և մասնագիտական գրականության դասախոսական կազմի հետազոտական աշխատանքներում ներգրավելու համար։

ԷԲԱ-ն կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը։ Ակադեմիայի մեկ դասախոսի կողմից հրատարակվել է հոդված հետևյալ թեմայով՝ «Համակարգչային կախվածությունը որպես հոգեբանական և մանկավարժական խնդիր», (ԱՄՆ-ի «Cross-Cultural studies» հրատարակչություն, 2020 թ.)։ 2021թ.-ին Բոստոնում կայացած միջազգային գիտական և գործնական գիտաժողովում ներկայացվել է «Psychologycal-Pedagogical Feautures of the Pedagogue’s Emotional Exhausion» աշխատությունը։

Ինքնավերլուծությունից և փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ԷԲԱ-ն հետազոտական աշխատանքների իրականացման և ուսանողների մոտ ինքնուրույն գիտահետազոտական գործունեությունը խթանելու նպատակով, ավարտական կուրսի ուսանողների և դասախոսական կազմի համար անցկացրել է 18 ժամ տևողությամբ դասընթաց՝ «Գիտական հետազոտությունը քույրական գործում» թեմայով: Դասընթացի մասնակիցներին ներկայացվել են քույրական գործում ժամանակակից մոտեցումները հականեխիչ և անտիսեպտիկ միջոցների կիրառության վերաբերյալ: Դասընթացի հաջող փորձարկումից հետո որոշվել է այն ներառել «Քույրական գործի հիմունքներ» մոդուլում:

Դատողություններ:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն հանգամանքը, որ ԷԲԱ-ն հստակ է սահմանել ռազմավարական ծրագրում հետազոտական ոլորտում իր հետաքրքրություններն ու հավակնությունները, ինչը կարևոր է Ակադեմիայի կողմից սահմանված առաքելության իրագործման տեսակետից: Դրական է, որ նորաստեղծ հաստատություն լինելով, սահմանված նպատակների իրագործման համար իրականցվել են քայլեր, հիմք է դրվում և դասախոսոների, և ուսանողների մոտ հետազոտական ու վերուծական կարողությունների զարգացման համար:

Ողջունելի է, որ ուսանողներին տրվող առաջադրանքները մեծապես միտված են ուսանողների մոտ ինքնուրյուն մտածողության ձևավորմանը, վերլուծական մտքի զարգացմանը, ինչպես նաև արտակարգ իրվիճակներում ինքնուրյուն կողմնորոշվելու կարողությունների զարգացմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ Ակադեմիան ստեղծել է միջավայր /գրադարան, նյութատեխնիկական ռեսուրսներ և այլն/, որտեղ դասախոսական կազմն ունի հնարավորություն իրականացնելու բժշկական ոլորտի հետազոտական աշխատանքներ՝ կիրառելով միջազգային փորձը: Առկա են դեպքեր, երբ դասախոսների կատարած հետազոտության արդյունքները ներդրվել են դասավանդվող մոդուլներում: Այս աշխատանքների շարունկական դարձնելը կնպաստի Ակադեմիայում հետազոտական միջավայրի զարգացմանը:

Դրական է, որ դասախոսները կատարվող վերլուծությունների միջոցով և հետևելով ոլորտի զարգացումներին, պարբերաբար թարմացնում են քննարկվող բժշկական դեպքերի բազան, որը հնարավորություն է տալիս ուսանողների մոտ ձևավորել ինքնուրույն մտածողություն:

Եզրահանգում:

Հաշվի առնելով, որ ԷԲԱ-ն իր հետազոտության և զարգացման ոլորտում մշակել է իր հետաքրքրություններն ու հավակնություններն արտահայտող ռազմավարություն, ունի կարճաժամկետ ծրագրեր, իրականացնում է քայլեր ուսանողներին և դասախոսներին հետազոտական աշխատանքներում ներգրավելու համար, առկա են հետազոտական արդյունքների ուսումնական գործընթացում ներգրավելու դեպքեր, որոնք ըստ պլանավորվածի շարունակական բնույթ են կրելու, Ակադեմիան կարևորում է բժշկական նորամուծությունների քննարկումը և ներդրումը ուսումնական գործընթացում փորձագիտական խումբը գտնում է, որ ԷԲԱ-ն բավարարում է չափանիշ 6-ի պահանջները:

Եզրակացություն:

Փորձագիտական խումբը ԷԲԱ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 6-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր:

«Երեբունի» բժշկական ակադեմիան իր գործունեությունը իրականացնում է սեփական, նոր վերանորոգված եռահարկ շենքում:

Ակադեմիայի ուսումնական, լաբորատոր և օժանդակ տարածքները լրիվ բավարարում են մեկ ուսանողին լիցենզավորման պահանջներով նախատեսվող նորմերը: Առկա են կրթության կազմակերպման ժամանակակից և պարտադիր պահանջները և պայմանները ապահովող անհրաժեշտ սարքավորումներ, նյութեր և գույք, ինչպես նաև հետազոտական աշխատանքներն իրականացնելու համար ռեսուրսային հնարավորություններ: Բարելավման ծրագրում նաև նախատեսել են՝ «Վերազինել Նախնական Զինվորական Պատրաստության/ՆԶՊ/ կաբինետը, մինչև համընդհանուր ներառական կրթության անցմանը ուսումնական մասնաշենքում ստեղծել պայմաններ, ձեռք բերել մանիպուլյացիաների համար անհրաժեշտ ուսումնադիտողական պարագաներ, յուրաքանչյուր ենթախմբի համար առնվազն 4-5 հավաքածու, ուսումնական գործընթացում ներդնել տեղեկատվական տեխնոլոգիաներ, հարստացնել ուսումնատեխնիկական բազան, հարստացնել գրադարանը նորագույն գրականությամբ, ստեղծել էլեկտրոնային գրադարան և էլեկտրոնային քարտադարան, ֆիզկուլտուրայի մարզադահլիճը հարստացնել մարզասարքերով, բարելավել բաց մարզահրապարակը»: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ Ակադեմիան արդեն որոշ քայլեր է ձեռնարկել մանիպուլյացիաների համար անհրաժեշտ ուսումնադիտողական պարագաների ձեռքբերման, գրադարանային ֆոնդի հարստացման և վերանորոգման համար:

ԷԲԱ-ի ռեսուրսների դիտարկման արդյունքում փորձագիտական խումբն արձանագրել է հետևյալը, որ ԷԲԱ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի ուսուցումն իրականացնելու համար առկա է համապատասխան կաբինետներ/քույրական գործի ստիմուլացիոն 1 և 2, դեղագործության, վերակենդանացման և աղետների բժշկության, կոսմետոլոգիայի, մանկաբարձության, մանրէաբանության և ինֆեկցիոն հիվանդությունների /և լաբորատորիաներ/ օրգանական և անօրգանական քիմիայի, ատամնատեխնիկական գործի, անատոմիայի և ֆիզիոլոգիայի/կահավորված ամիրաժեշտ գույքով, համալրված նոր ուումնադիտողական միջոցներով, մուլյաժներով/ խնամքի պարագաներով և այլ նյութերով:

ԷԲԱ-ի տարածքում առկա է վերանորոգված, կահավորված ընթերցասրահ, գրապահոց, գրադարան շուրջ 58090 կտոր գրքերով, որոնցից 135 անուն՝ հայալեզու, 410 անուն՝ ռուսալեզու, 79 անուն՝ անգլալեզու գրքեր, առկա է ցուցասարք: Ակադեմիայի ուսանողները կարող են օգտվել նաև ՀՀ ԱՆ Ազգային ինստիտուտի գրադարանից: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ Ակադեմիան նախատեսում է թվայնացնել առկա գրադարանային ֆոնդը:

Մարզադահլիճին փոխարինում էր այլ մասնաշենքում գտնվող լողավազանը:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ համակարգչային լսարանը գտնվում է վերանորոգման փուլում, առկա են սահմանափակ քանակով համակարգիչներ:

Առանցքային հմտությունների առարկայախմբերի մոդուլների ուսուցման համար առկա են վերանորոգված լսարաններ նախատեսված 20 և ավելի ուսանողների համար:

ԷԲԱ-ն իր մասնագիտական կրթական ծրագրերի կատարման չափանիշների հմտացումն իրականացնում է օգտագործելով նաև Էրեբունի Բժշկական Կենտրոնի, «Նորք» հանրապետական ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոցի, «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոնի, «Էրեբունի» ԲԿ պոլիկլինիկայի, «Մաշկաբանության և ՍՃՓ հիվանդությունների ԲԳԿ» ՓԲԸ-ի, «Նորադենտ» ստոմատոլոգիական կլինիկայի, «Գեդեոն Ռիխտեր» ՍՊԸ-ի բազային հնարավորությունները:

Նախատեսված է ճաշարան, որ դեռ վերանորոգման փուլում է գտնվում:

ԷԲԱ-ի շենքում առկա է նաև բուժկետ, հակահրդեհային համակարգ, անվտանգության համար նախատեսված տեսախցիկներ, ջեռուցման համակարգի կետ: Սակայն հարկ է նշել, որ հատուկ կարիքներ ունեցող ուսանողների և դասախոսների համար պայմաններ չկան:

ԷԲԱ-ի տարածքը ապահովված է նաև WIFI ծառայությունով և ինտերնետային հասանելիությամբ:

ԷԲԱ-ի ֆինանսական միջոցները ձևավորվում են ուսուցման կրթական ծառայությունների մատուցման վճարներից /2021թ. նախահաշվի տվյալներ 99.2 %/ և այլ մուտքերից /0.8%/:2019թ. ,2020թ. և 2021թ. ֆինանսական միջոցների աճողական տենդենց կա, քանի որ ուսանողների թիվը 70-ից դարձել է 350:

Փաստաթղթերի վերլուծությունից պարզ դարձավ, որ ԷԲԱ-ն իր առաքելություններն ու նպատակներն իրականացնելու համար 2021թ. բյուջեից հատկացրել է ուսումնական ծախսեր 10.7%, որից ուսումնական սարքավորումների և գույքի ձեռք բերման համար 4.6%, գրադարանի արդիականացման համար 0.3%, լաբորատոր և այլ ուսումնական նյութերի ձեռք բերման համար 1.2%, հետազոտության և հրատարակման համար 0.3%, պրակտիկաների կազմակերպման համար 4.3% ծախսեր:

ԷԲԱ-ի ծախսերի շուրջ 54.7% կազմում է աշխատավարձի ֆոնդը:

Փորձագիտական այցի ընթացքում ուսումնասիրած ֆինանսական հոսքերի փաստաթղթերից պարզ դարձավ, որ 2021թ. ԷԲԱ-ի եկամուտները աճել են 2020թ. համեմատ, ինչը պայմանավորված է ուսանողների թվաքանակի աճով, որին համապատասխան աճել են նաև բյուջեից հատկացված ֆինանսական ծախսերը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ԷԲԱ-ն ունի ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն, իսկ ֆինանսական գործունեության իրավական հիմքեր են կազմում ԿԳՄՍ-ին, ՊԵԿ-ին, ՀՀ Վիճակագրական Կոմիտեին և հոգաբարձուների խորհրդին ներկայացվող հաշվետվությունները:

ԷԲԱ-ի ֆինանսական միջոցների բաշխումն ըստ ծախսային հոդվածների իրականացվում է համաձայն ֆինանսական նախահաշիվների, որը հաստատվում է հոգեբարձուների խորհրդի որոշմամբ:

Համաձայն ինքնավերլուծության՝ ԷԲԱ-ում գործող մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովելու համար ֆինանսական միջոցների

բաշխման քաղաքականությունն իրականացվում է համաձայն հետևյալ գործընթացների՝

- ֆինանսական հոսքերի կանխատեսումը՝ ըստ ուսման վճարների, ներդրումային հոսքերի և այլ մուտքերի,
- ֆինանսական ռեսուրսների պարբերաբար պլանավորումն ըստ համապատասխան ուսումնական գործընթացի փուլերի՝ տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ, պրակտիկա և այլն,
- ֆինանսական միջոցների արդյունավետ բաշխման մեխանիզմների սահմանումը՝ ֆինանսատնտեսական պլանավորման, մարկետինգային վերլուծությունների, մշտադիտարկման քաղաքականության և այլ ընթացակարգերով,
- ֆինանսական և նյութական միջոցների հայթայթման հնարավորությունների պարբերաբար վերանայումը՝ դրամաշնորհների, ներդրումների, նոր կրթական և համանման այլ ծրագրերի իրականացմամբ,
- ֆինանսական միջոցների երկարաժամկետ պլանավորման մեխանիզմների կիրառումը՝ կրթական ծրագրերի իրականացման շարունակականությունը ապահովելու համար:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ֆինանսական միջոցների նախահաշիվների կազմումը տեղի է ունենում ստորաբաժանումների կողմից ներկայացված անհրաժեշտ ռեսուրսների վերաբերյալ զեկուցագրերի և պահանջագրերի միջոցով:

ԷԲԱ-ի ուսանողներն ու դասախոսական աշխատակազմն օգտվում են ողջ ռեսուրսային բազայից, չնայած որոշակի դժվարություններ են առաջացրել վերանորոգման աշխատանքները: «Քույրական գործ», «Մանկաբարձություն» և «Դեղագործություն» մասնագիտությունների կրթական ծրագրերին համահունչ

առկա է համապատասխան գրականություն, սակայն «Ատամնատեխնիկական գործ» և «Կոսմետոլոգիա» մասնագիտությունների համար անհրաժեշտություն կա նոր գրականության:

Ինքնավերլուծությունից և փորձագիտական խմբի այցից պարզ դարձավ, որ ԷԲԱ-ում հաշվապահական հաշվառման բաժնի աշխատանքներն իրականացվում են ՀՀ Հարկային և աշխատանքային օրենսգրքերի, ֆինանսահաշվային այլ նորմատիվ ակտերի համաձայն: Տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության համակարգը ԷԲԱ-ում կանոնակարգվում է կադրերի բաժնի կողմից: Առկա է բոլոր ստորաբաժանումների աշխատանքային կանոնակարգերը և աշխատանքային պլանները: Նախատեսվում է ստեղծել ներքին համակարգչային ցանց, որը թույլ է տալիս փոխանակել տեղեկատվությունը տարբեր ստորաբաժանումների միջև: Քանի որ ԷԲԱ-ն ունի երեքամյա պատմություն արխիվի ստեղծումը նոր է նախատեսվում:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ Ակադեմիայում առկա է մուտքի և բակի, ինչպես նաև միջանցքների տեսահսկման համակարգ, մուտքը հսկվում է նաև անվտանգության աշխատակիցի կողմից: Ուսանողների համար նախատեսված ճեմասրահը կահավորված է հարմարավետ բազմոցներով:

Ըստ ինքնավերլուծության բուժական սպասարկում և օգնություն ցուցաբերելու նպատակով ԷԲԱ-ում գործում է վերանորոգված բուժկետ համապատասխան հագեցվածությամբ /կահույք, անհրաժեշտ պարագաներ, դեղորայք/:

Ուսանողների և դասախոսներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիությունը, հասանելիությունը և արդյունավետությունը գնահատելու մեխանիզմներն են որակի ներքին ապահովման կենտրոնի կողմից մշակած հարցաթերթիկները: Ինքնավերլուծության և փորձագիտական այցի փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ հարցման արդյունքների համաձայն ուսանողների ռեսուրսների ապահովվածության

բավարարվածությունը 92% է, իսկ դասախոսներինը՝ 81%, ինչը կարելի է համարել բարձր ցուցանիշ: Չնայած այս ցուցանիշի, ռազմավարական ծրագրի հիմնախնդիր 7-ում նախատեսվում է նյութատեխնիկական հենքի հարստացում, ինչը հնարավորություն է ստեղծում ժամանակակից ռեսուրսների ներդնմանը մասնագիտությունների արդիական ուսուցման գործընթացում:

Դատողություններ:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն փաստը, որ ԷԲԱ-ում առկա նյութական, ֆինանսական ռեսուրսները, դրանց կառավարումը, շենքը և հիվանդանոցները, ստոմատոլոգիական կլինիկան, կոսմետոլոգիական կլինիկաները լիովին բավարար են և նպաստավոր պայմաններ են ստեղծում առաքելության, ռազմավարական ծրագիրն իրականացնելու համար:

Հիմք ընդունելով ներկայացված 2021 թվականի նախահաշվի եկամտային և ծախսային հոդվածների հարաբերակցությունը, ուսանողների քանակի ավելացման նպատակադրումը և այն փաստը, որ ծախսերի գերակշիռ մասը հատկացվում է աշխատավարձին, փորձագիտական խումբը գտնում է, որ ֆինանասական ռեսուրսների բաշխման պլանավորումն ըստ ՄԿԾ-ների, ռեսուրսներով ապահովվելու երկարաժամկետ պլանավորման համակարգի ներդրումը, կնպաստի ԷԲԱ-ի ֆինանսական կայունությանը:

Դրական է այն փաստը, որ ԷԲԱ-ն կարևորում է ուսանողների պրակտիկ հմտությունների բարելավման նպատակով առկա հիվանդանոցների և կլինիկաների թվաքանակի ավելացումը, ինչպես նաև գործնական պարապմունքների համար նախատեսված լաբորատորիաների և կաբինետների հագեցվածությունը:

Գնահատելի են Ակադեմիայի ջանքերը գրադարանային ֆոնդի հարստացման, ինչպես նաև առկա գրականության թվայնացման համար:

Դրական է, որ ԷԲԱ-ում առկա է տեղեկատվությունը կառավարելու ընթացակարգ, սակայն այն դեռ գործարկված չէ: Ողջունելի է այն փաստը, որ

Ակադեմիան գիտակցում է փաստաթղթաշրջանառության գործընթացը կառավարելու քաղաքականության բարելավումը:

Ուսումնական միջավայրի ապահովության, առողջության և անվտանգությանն ուղղված ծառայություններն ապահովված են: Միևնույն ժամանակ հատուկ կարիք ունեցող, մասնավորապես, հենաշարժական խնդիր ունեցող ուսանողների և դասախոսների համար արդյունավետ պայմանների ստեղծման աշխատանքները ընթացքի մեջ են:

Դրական է այն հանգամանքը, որ ԷԲԱ-ն իրականացրել և վերլուծել է ռեսուրսային բազայով ուսանողների և դասախոսների բավարավածության վերաբերյալ գործընթացը և ՌԾ-ում կարևորում է հետագա բարելավման կանոնակարգը:

Եզրահանգում:

Հաշվի առնելով, որ ԷԲԱ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր, ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար, ստեղծվել է հագեցած լոբորատորիաներ և կաբինետներ, առկա է տեղեկատվությունը կառավարելու ընթացակարգ, ուսումնական միջավայրի ապահովության, առողջության և անվտանգությանն ուղղված ծառայություններն ապահովված են, փորձագիտական խումբը գտնում է, որ ԷԲԱ-ն բավարարում է չափանիշ 7-ի պահանջներին:

Եզրակացություն:

Փորձագիտական խումբը ԷԲԱ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 7-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր՝

Համաձայն ինքնավերլուծության՝ Ակադեմիայի հաշվետվողականության գործընթացը կանոնակարգվում է «Միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքով, ակադեմիայի կանոնադրությամբ, ստորաբաժանումների կանոնակարգերով, շահակիցների առջև հաշվետվողականության ապահահովման քաղաքականությամբ և ընթացակարգով:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ԷԲԱ-ի հաշվետվողականությունը կանոնակարգված է միայն ռեկտորի աշխատանքների պլանավորման և հաշվետվողականության փաստաթղթերում, սակայն հարկ է նշել, որ դրանք կատարողականի հստակ ցուցիչներով տեղեկատվություն չեն ներառում, և մեծապես նկարագրողական բնույթի են: Որպես ԷԲԱ-ի ֆինանսական գործունեության հաշվետվողականություն հաշվապահության ստորաբաժանումը ներկայացնում է ԿԳՄՍ-ին, ՊԵԿ-ին, ՀՀ Վիճակագրական կոմիտեին և հոգաբարձուների խորհրդին, սակայն դրանք պարտադիր բնույթ են կրում:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ բաժնի վարիչի հաշվետվողականությունը սահմանափակվում է ուսանողների բացակայության, ընդհանուր և որակական առաջադիմության ցուցիչների ներկայացմամբ: Համաձայն ամբիոնի վարիչների աշխատանքային կանոնակարգի 5-րդ կետի /Ամբիոնի վարիչի աշխատանքային պարտականություններ/ նշվում է միայն. «Ապահովվել ամբիոնի աշխատանքային պլանի իրագործումը, ամբիոնի որոշումների կատարումը», որը իրենից չի ենթադրում աշխատանքային պլանի կատարողականության հաշվետվության կազմման և վերլուծության գործընթաց:

ՈԱ-ի հաշվետվություն առկա չէ, քանի որ ՈԱ-ի պատասխանատուն իր պաշտոնը ստանձնել էր 2021 թ. մարտ ամսից և իր գործառույթների իրականացման աշխատաքները դեռ սաղմնավորման փուլում են:

Առկա է բոլոր ստորաբաժանումների աշխատանքային կանոնակարգերը և պլանները, սակայն գործընթացների իրականացման տեղեկատվության հաղորդման վարից վեր հաշվետվության և վերից վար մեխանիզմները դեռ բարելավման փուլում են:

ԷԲԱ-ի գործունեությանն առնչվող տեղեկատվության տարածման համար կիրառվում է 2 հարթակ՝ պաշտոնական կայքէջը և ֆեյսբուքյան էջը: Վերջիններիս պատասխանատուն է ուսումնական գծով պրոռեկտորը: Պաշտոնական կայքէջը եռալեզու է /հայերեն, անգլերեն, ռուսերեն/, սակայն ռուսալեզու բաժնում տեղեկատվություն չկա, իսկ անգլալեզու բաժնում տեղեկատվությունը ավելի քիչ է, քան հայալեզու բաժնում: Պաշտոնական կայքէջի թարմացումը պարբերական բնույթ չի կրում: Կայքէջում առկա է ԷԲԱ-ի կարգերը և կանոնակարգերը, սակայն ԷԲԱ-ի առանցքային գործընթացների /հաշվետվություններ, ստորաբաժանումների, բաժինների կանոնակարգեր/ թափանցիկության և հասարակության հասանելիության տեղեկատվությունը բացակայում է: Չեն ներգրավել նաև ԷԲԱ-ում տեղի ունեցող բարեփոխումներին, այլ միջոցառումներին վերաբերող հայտարարությունները: Հետադարձ կապի ապահովման նպատակով Ակադեմիայի պաշտոնական կայքէջում նախատեսված է նամակագրության պատուհան:

Ինքնավերլուծության և փորձագիտական այցի ուսումնասիրություններից պարզվեց, որ դիմորդներ ներգրավվելու նպատակով տպագրվել են գովազդային բուկլետներ և իրականացվել այցեր տարբեր դպրոցներ:

Հաստատության կողմից հասարակությանը գիտելիքի փոխանցման նպատակով իրականացվել են որոշ կրթական և խորհրդատվական ծառայություններ, մասնավորապես՝ դպրոցներ գործուղվող խումբը հանդես է եկել «Ծխելու դեմ պայքարը, որպես առողջ ապրելակերպի հիմք», «Անձնական և ընդհանուր հիգիենայի կանոնների պահպանման նշանակությունը COVID-19 համավարակի կանխարգելման գործում», թեմայով դասախոսություններով:

Հարկ է նշել, որ ԷԲԱ-ն ազգային և համամարդկային ոգով դաստիարակված անձի և քաղաքացու համակողմանի ձևավորման նպատակով 44 օրյա պատերազմի օրերին վիրաբույժ-դասախոսների և ուսանողների ուժերով իրականացրել է Երեբունի վարչական շրջանի բնակչությանը Առաջին բուժօգնության ուսուցանում մանիպուլյացիաների ցուցադրմամբ: Ներկայացված

միջոցառումը լուսաբանվել է նկարների տեղադրմամբ ԷԲԱ-ի պաշտոնական կայք էջում:

Դատողություններ:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ Ակադեմիան քայլեր է ձեռնարկում հաշվետվողականության և թափանցիկության ապահովման համար: Ակադեմիայում ռեկտորը և ստորաբաժանումները ներկայացնում են տարեկան հաշվետվություններ, այնուամենայնիվ դրանց նկարագրողական բնույթը կարող է խոչնդոտել Ակադեմիայում առկա խնդիրների վերհանմանը և դրանց հաղթահարման քայլերի մշակմանը: Դեռ ավելին, վարչական առանձին օղակների հաշվետվողականության՝ վարից վեր և հակառակը, գործուն մեխանիզմ առկա չէ, ինչը կարող է պայմանավորված լինել Ակադեմիայի կառուցվածքում ոչ հստակ ձևավորված կապերով:

Գնահատելի է ֆեյսբուքյան էջի և պաշտոնական կայքէջի առկայությունը, սակայն վերջինիս ոչ պարբերական թարմացումը, ռեկտորի տարեկան հաշվետվությունների բացակայությունը, հայտարարությունների և նորությունների թերի տեղադրումը չեն ապահովում Ակադեմիայի թափանցիկությունը, ինչը կարող է խոչընդոտ հանդիսանալ ԷԲԱ-ի վերաբերյալ արտաքին շահակիցների հետաքրքրվածության բավարարմանը: Մասնավորապես, օտար լեզուներով տեղեկատվության ոչ ամբողջական ներկայացումը կայքէջում կարող է խոչընդոտել միջազգային գործընկերների հետ կապերի ձևավորմանը, ինչը առաջնային է միջազգայնացման ձգտող ՄՈՒՀ-ի համար ինչպես համագործակցության, այնպես էլ արտասահմանցի ուսանողներին ներգրավելու տեսակետից:

Քանի որ Ակադեմիայի հետադարձ կապի մեխանիզմները համակարգված չեն, իսկ հասարակության հետ համագործակցության ուղղությունները՝ հստակեցված, ապա նվազում է Ակադեմիայի կողմից ներքին և արտաքին շահակիցների կարիքներին արձագանքելու հնարավորությունը:

ԷԲԱ-ի կողմից հասարակությանը գիտելիքի փոխանցման գործընթացի շրջանակներում իրականացվում են որոշակի միջոցառումներ, սակայն այդ գործընթացները կանոնակարգված չեն, հստակ մեխանիզմներ առանձնացված չեն,

որոնք կարող են դրական անդրադառնալ ԷԲԱ-ի ձեռքբերումների և գրանցված արդյունքների վրա:

Եզրահանգում:

Հաշվի առնելով, որ ԷԲԱ-ն ունի հաշվետվողականության սահմանված կարգի բարելավման կարիք, ընթացակարգերի, գործընթացների թափանցիկության և հասարակության հասանելության ցածր աստիճան, հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմների սակավություն, հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցման մեխանիզմների վերանայման կարիք, փորձագիտական խումբը գտնում է, որ ԷԲԱ-ն չի բավարարում չափանիշ 8-ի պահանջներին:

Եզրակացություն:

Փորձագիտական խումբը ԷԲԱ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 8-ի պահանջներին գնահատում է **անբավարար:**

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր:

Ակադեմիայի արտաքին կապերի հաստատման գործընթացը հանդիսանում է ՌԾ հիմնախնդիրներից մեկը (Հիմնախնդիր 10): Այն ներկայացված է նաև Բարելավման միջոցառումների տարեկան պլանի 4-րդ կետում: Ակադեմիայի միջազգայնացմանը նպաստող հստակ ընթացակարգեր չկան, բայց նախատեսվում են գործընթացներ ինչպես միջազգային համագործակցությունների, այնպես էլ կրթական ծրագրերի բենչմարքինգի ապահովման համար: Ակադեմիան նախատեսում է իրականացնել կրթական ծրագրերի բենչմարքինգ ինչպես միջազգային, այնպես էլ տեղական ՄՈՒՀ-երի, մասնավորապես հարևանությամբ գտնվող Հայ-ամերիկյան Էրեբունի պետական բժշկական քոլեջի հետ:

Պրակտիկաների կազմակերպման համար Ակադեմիան համագործակցում է ինչպես Էրեբունի ԲԿ-ի, այնպես էլ այլ բժշկական հաստատությունների և մասնագիտացված կառույցների հետ: Ինչ վերաբերում է փորձի փոխանակմանը, ապա Ակադեմիան ապահովում է ներքին շահակիցների ներգրավումը և մասնակցությունը առցանց կազմակերպվող սեմինարներին, կոնֆերանսներին և վեբինարներին:

Արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացներն իրականացնելու համար Ակադեմիան ունի Միջազգային կապերի համակարգողի հաստիք: Ըստ ինքնավերլուծության, այն թափուր է, և գործընթացներն իրականացնում է ուսումնական գծով պրոռեկտորը: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ հաստիքը զբաղեցնում է նոր ընդունված աշխատակից: Չնայած նրան, որ ենթակառուցվածքի կողմից գործընթացների իրականացումը կանոնակարգված չէ, այնուամենայնիվ ուսումնական գծով պրոռեկտորը 2020 թ.-ից համակարգել է առցանց միջազգային սեմինարներին և վեբինարներին Ակադեմիայի շահակիցների մասնակցությունը: Դրանք հիմնականում կազմակերպվել են ԱՄՆ-ում, որտեղ ներկայացել են միջազգային մասնագետներ Իրանից, ԱՄՆ-ի Գլոբալ կրթության զարգացման ինստիտուտից, ԱՄՆ-ի Կալիֆորնիայի պետական համալսարանից և ԱՄՆ-ի Տեխասի համալսարանից:

Ակադեմիան սերտորեն համագործակցում է ինչպես միջազգային, այնպես էլ տեղական հաստատությունների հետ: Մինչդեռ, միջազգայնացման գործընթացներում դեռևս կնքված համաձայնագրեր և պայմանագրեր չկան: Այնուամենայնիվ, առկա է համագործակցություն Sigma Theta Tau միջազգային բուժքույրական պատվավոր միության հետ՝ շնորհիվ Հազաբարձուների խորհրդի նախագահի անդամակցության: Կա նաև համագործակցություն ԱՄՆ-ի Գլոբալ կրթության զարգացման ինստիտուտի հետ: 2019-2020 և 2020-2021 ուս. տարիների ընթացքում «Քույրական գործի հիմունքներ» դասընթացի դասավանդումը իրականացվել է ԱՄՆ-ից հրավիրված մասնագետի՝ հանրային առողջության բուժքույրի կողմից: Վերջինս, ինչպես պարզվեց փորձագիտական այցի ընթացքում,

ունեցել է ուսուցողական բնույթ ոչ միայն ուսանողների համար, այլև համարվել է փորձի փոխանակում Ակադեմիայի դասախոսների համար։

Ըստ Ինքնավերլուծության և Ակադեմիայի ղեկավարության՝ մինչև 2022 թվականի ավարտը նախատեսվում է կնքել պայմանագիր ԱՄՆ Տեխասի նահանգի Թայլեր համալսարանական քոլեջի հետ բենչմարքինգի և փոխանակային ծրագրերի իրականացման համար։ Նախատեսվում է նաև կնքել պայմանագիր Միչիգանի համալսարանի հետ դասախոսների փորձի փոխանակման համար։

Ակադեմիան ունի համագործակցություն տեղական բժշկական կենտրոնների և մասնագիտացված դեղատների, կոսմետոլոգիական կենտրոնների, ատամնաբուժական հաստատությունների հետ, ինչի շնորհիվ կամակերպվում է ուսանողների պրակտիկան։ Ակադեմիան համագործակցում է նաև «Տանժեռ» ռեքրութինգային ՍՊԸ-ի հետ շրջանավարտներին աշխատանքի տեղավորման նպատակով։

Ակադեմիայում օտար լեզուներից դասավանդվում է անգլերենը։ Այդուհանդերձ, ուսանողների և դասախոսների շրջանում օտար լեզվի իմացության մակարդակը ցածր է։ Միջազգայնացման արդյունավետության բարձրացման համար Ակադեմիան կազմակերպում է անգլերեն լեզվի դասընթացներ դասախոսների համար։ Ուսանողների համար անգլերեն լեզվի դասընթացներն իրականացվում են միայն ուսումնական պլանի շրջանակներում և հիմնականում ներառում են մասնագիտական անգլերեն։ Ակադեմիան ունի ռեկտորի կողմից 2021թ.-ին հաստատված «Օտար լեզվի դասընթացների ծրագիր», որի իրականացման ավարտին դասախոսները թեստավորվել են։ Նախատեսվում է, որ անգլերեն լեզվի դասընթացները դասախոսների համար կունենան շարունակական բնույթ։

Փորձագիտական խմբի այցի արդյունքում պարզ դարձավ, որ ինչպես վարչական, այնպես էլ պրոֆեսորադասախոսական կազմը տեղյակ է Ակադեմիայի միջազգայնացման գործընթացին, և դրան զուգահեռ անգլերենի իմացության ցածր մակարդակը համարում են առաջնահերթ խնդիր օտարերկրյա ուսանողներ ընդունելու և անգլերեն դասավանդելու տեսանկյունից։

Դատողություններ:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն փաստը, որ արտաքին կապերի հաստատման և միջազգայնացման գործընթացները սահմանված են ՌԾ-ում, ներկայացվում են Բարելավման միջոցառումների տարեկան պլանում: Դա մատնանշում է միջազգայնացման կարևորությունը Ակադեմիայի համար: Միջազգայնացման համար հստակ ընթացակարգերի և քայլերի պլանավորումը կնպաստի ոլորտի շարունակական զարգացմանը:

Չնայած այն հանգամանքին, որ միջազգայնացման ձգտող ՄՈՒՀ-ի Միջազգային կապերի համակարգողի հաստիքը զբաղեցրել է ուսումնական գծով պրոռեկտորը, այնուամենայնիվ համապատասխան գործընթացները չեն տուժել: Գնահատելի է այն, որ միջազգային համագործակցության զարգացման համար Ակադեմիան կազմակերպում է ներքին շահակիցների մասնակցությունը միջազգային առցանց սեմինարներին, կոնֆերանսներին և վեբինարներին: Վերջինս նպաստում է ՊԴ կազմի մասնագիտական գիտելիքների ընդլայնմանը և արդիականացմանը, ինչպես նաև առաջատար մասնագետների հետ շփման արդյունքում ոլորտի նորարարությունների մասին տեղեկացմանը: Դեռ ավելին, կազմակերպվում են անգերեն լեզվի դասընթացներ դասախոսների համար, ինչը կարևոր է միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու տեսանկյունից: Դրական է համարվում այն, որ Ակադեմիան համագործակցում է, և նախատեսում է կնքել պայմանագրեր արտասահմանյան մասնագիտական կառույցների հետ ինչպես բենչմարքինգի իրականացման, այնպես էլ ներքին շահակիցների փորձի փոխանակումն ապահովելու համար: Վերջիններս կնպաստեն ինչպես ՊԴ կազմի մասնագիտական որակների զարգացմանը, այնպես էլ կապահովեն ժամանակին համահունչ և աշխատաշուկային համապատասխան շրջանավարտների պատրաստմանը:

Գնահատելի է նաև այն, որ կարճ ժամանակահատվածում Ակադեմիան ուսանողների պրակտիկաների կազմակերպման համար բացի հարևանությամբ գտնվող Էրեբունի ԲԿ-ից, համագործակցում է նաև այլ ԲԿ-ների և մասնագիտացված կենտրոնների հետ:

Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբը նշում, է որ անգլերեն լեզվի մակարդակի բարձրացման աշխատանքները ուսանողների և շրջանում առավել ինտենսիվ դարձնելու անհրաժեշտությունը, որը կնպաստի սահմանված նպատակների իրագործմանը միջազգային ուսանողներ ներգրավելու տեսակետից:

Եզրահանգում:

Հաշվի առնելով այն, որ Ակադեմիան իրականացնում է միջազգայնացմանն ուղղված հստակ գործընթացներ, ունի սահմանված նպատակներ, ապահովում է միջազգային սեմինարներին ներքին շահակիցների մասնակցությունը, դասախոսների փորձի փոխանակմանը, պրակտիկաների իրականացման համար համագործակցում է տեղական ԲԿ-ների և մասնագիտացված կառույցների հետ, նախատեսում է արտասահմանյան կառույցների հետ պայմանագրերի կնքում և գիտակցում է օտար լեզվի իմացության անհրաժեշտությունը, փորձագիտական խումբը Չափանիշ 9-ը գնահատում է **բավարար**:

Եզրակացություն:

ԷԲԱ հիմնադրամի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 9-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր:

ԷԲԱ-ում որակի ապահովման խումբը ձևավորվել է 2021թ. նոյեմբերին ինքնավերլուծությունն իրականացնելու նպատակով, իսկ 2022թ. մարտ ամսից ստեղծվել է որակի ներքին ապահովման պատասխանատուի կես դրույքով հաստիք:

Որակի ապահովման խմբում ընդգրկված են երեք անդամ, որից երկուսը դասախոսական կազմից: Որակի ապահովման սկզբունքները, քաղաքականությունը առկա են 2020թ.-ին հաստատված Որակի ապահովման ձեռնարկում, ինչպես նաև հաստատված է Որակի ապահովման պատասխանատուի 2021-2022թթ. աշխատանքային պլանը, որը սակայն մինչև 2022թ. մարտ ամիսը չի ունեցել դրա իրագործման համար հստակ պատասխանատու, անհրաժեշտ մեխանիզմներ և գործիքներ:

Որակի ապահովման խմբին տրամադրվել է առանձին աշխատասենյակ համապատասխան նյութատեխնիկական ռեսուրսներով և կահավորմամբ, ինչպես նաև որակի ապահովման գործընթացներին կամավորության սկզբունքով խմբին օգնել են ևս երեք անդամ, որոնցից մեկը ուսանող:

Որակի ապահովման կենտրոնը նոր է ներդրել հարցումների մշակույթը ուսանողների և դասախոսների շրջանում: Փորձագիտական այցի ժամանակ պարզ դարձավ, որ հարցումները բավարար չեն ուսումնասիրությունների և խնդիրների լիարժեք վերհանման համար, և հարցումների վերլուծությունները ներկայացվում են բանավոր: Արտաքին շահակիցների շրջանում հարցումներ չեն կատարվել, եղել են միայն ոչ համակարգված հանդիպումներ:

ԷԲԱ-ում որակի ապահովման համակարգը նորաստեղծ է, և հետևաբար նրա մշտադիտարկում, գնահատում դեռ չի իրականացվել:

Ակադեմիայի գործընթացների որակի վերաբերյալ տվյալները չեն համակարգվում, հաշվետվություններ չեն կազմվում: Ինքնավերլուծության մեջ նկատելի է վերլուծականության պակաս, SWOT կատարելու դժվարություններ: Նոր են մեկնարկում տվյալների հավաքագրման գործընթացները, և հաստատության վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու համար տվյալները չեն բավարարում:

Ինքնավերլուծության մեջ Ակադեմիան որպես թույլ կողմ նշում է իր որոշ գործընթացների որակի ապահովման շրջափուլի անկատարությունը, իսկ փորձագիտական հանդիպումներից պարզվեց, որ ներքին շահակիցները շատ հաճախ տեղյակ չեն հարցումների արդյունքների մասին, հետևաբար նաև

համապատասխան հարցումների արդյունքում գնահատումն ու բարելավումը բացակայում են:

Դատողություններ:

Փորձագիտական խումբը գտնում է, որ ԷԲԱ-ում որակի մշակույթը դեռևս կայացման փուլում է: Որակի մշակույթի տարածման նպատակով փորձագիտական խումբը կարևոր է համարում արտաքին և, մասնավորապես, ներքին շահակիցների ակտիվ և լայնածավալ ներգրավումը Ակադեմիայի գործընթացների որակի ապահովման մեջ:

Արտաքին գնահատման գործընթացների համար Ակադեմիան իրականացրել է ինքնավերլուծություն, առկա են համապատասխան հիմքեր, սակայն փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ինքնավերլուծությունում քիչ են վերլուծությունները, իսկ տվյալների հավաքագրումը և դրանց մշակուը խորքային չեն:

Որակի ապահովման փաստաթղթային հենքերը շարունակական բարելավման և հաստատության ներկա նպատակների իրականացման համար վերանայման կարիք ունեն:

Չնայած նրան, որ ԷԲԱ-ն որակի ապահովման գործընթացների համար տրամադրում է մարդկային ռեսուրսներ, այնուամենայնիվ մասնագիտական վերապատրաստումները կնպաստեն որակի ապահովման պատասխանատուի կարողությունների զարգացմանը:

Թեև Ակադեմիան արտաքին շահակիցներին տրամադրում է տեղեկատվություն նաև Ֆեյսբուքյան էջի և պաշտոնական կայքէջի միջոցով, սակայն երկու տիրույթում էլ որակի ապահովման առնչվող տեղեկատվությունը հիմնականում բացակայում է:

Եզրահանգում:

Հաշվի առնելով, որ Ակադեմիայում որակի ապահովման պատասխանատուն նոր է նշանակվել, որակի ներքին ապահովման քաղաքականությունն ու ընթացակարգերը դեռևս ներդրված չեն, որակի ապահովման կենտրոնի, տվյալների հավաքագրման ու վերլուծության

մեխանիզմների ոչ լիարժեքությունը, ԷԲԱ-ի գործընթացների արդյունավետության ուսումնասիրման և վերլուծությունների պակասը, ինչպես նաև դրանց որակի վերաբերյալ տեղեկատվության ոչ բավարար հասանելիությունը, փորձագիտական խումբը գտնում է, որ ԷԲԱ-ի որակի ապահովման ներքին համակարգը դեռևս կայացման փուլում է: :

Եզրակացություն:

Փորձագիտական խումբը ԷԲԱ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 10-ի պահանջներին գնահատում է **անբավարար**:

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	*ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ*
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում ու վարչարարություն	Բավարարում է
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարարում է
4. Ուսանողներ	Բավարարում է
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Բավարարում է
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարարում է
8.Հասարակական պատասխանատվություն	Չի բավարարում
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Բավարարում է
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Չի բավարարում

Հերմինե Գրիգորյան

Փորձագիտական խմբի ղեկավար

30.08.2022թ.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Հերմինե Գրիգորյան՝ 1992թ.-ին ավարտել է Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը: Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու է (2008), դոցենտ (2011): 1992 թվականից դասավանդում է Վանաձորի պետական համալսարանում /ՎՊՀ/: Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի Բնական գիտությունների ֆակուլտետի դեկան, «Մաթեմատիկայի և ինֆորմատիկայի» ամբիոնի դոցենտ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, փորձագիտական խմբի ղեկավար: Վարում է «Մաթեմատիկական ֆիզիկայի հավասարումներ», «Դիֆերենցիալ հավասարումներ», «Կոմպլեքս անալիզ», «Մեկ փոփոխականի ֆունկցիայի դիֆերենցիալ և ինտեգրալ հաշիվ», «Շատ փոփոխականի ֆունկցիայի դիֆերենցիալ և ինտեգրալ հաշիվ», «Ֆինանսական մաթեմատիկա» դասընթացները: Զբաղվում է փոփոխական հաստության անիզոտրոպ սալերի եզրային խնդիրների հարցերով:

Ալեքսեյ Կրյուկով՝ Կուրսկի պետական բժշկական համալսարանի ուսումնական գծով փոխտնօրեն, դոցենտ, բժշկական գիտությունների թեկնածու: 1996-2002թթ. ավարտել է Կուրսկի պետական բժշկական համալսարանը՝ ընդհանուր բժշկություն մասանգիտությամբ: 2002-2005թթ. ավարտել է Կուրսկի պետական բժշկական համալսարանը՝ ախտաֆիզիոլոգիայի ամբիոնի ասպիրանտուրան: 2006թ. -ին ստացել է բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 2009 թ. -ից եղել է Կուրսկի պետական բժշկական համալսարանի որակի կառավարման համակարգում՝ որպես ախտաֆիզիոլոգիայի ամբիոնի որակի պատասխանատու: 2014 թ.-ից եղել է «Ռուսաստանի բժշկական լիգա» համառուսական հասարակական կազմակերպության փորձագետ: 2020-2022թթ. ներքին աուդիտ իրականացնելիս եղել է բաժնի կազմակերպչական, ուսումնական, մեթոդական, գիտական և կրթական գործունեության խմբի ղեկավար: 2015-

2021թթ. մասնակցություն է ունեցել հավատարմագրման գործընթացների (ընդհանուր 10 գործընթաց) ՝ որպես փորձագետ (օրդինատուրաի, ասպիրանտուրայի մակարդակներում): 2019թ.-ից եղել է Կուրսկի պետական բժշկական համալսարանի ինքնավերլուծության հանձնաժողովի անդամ: 2020-2021թթ. եղել է Կուրսկի պետական բժշկական համալսարանի ինքնավերլուծության հանձնաժողովի խմբի ղեկավար՝ միջազգային հավատարմագրման նպատակով (ծրագրի հավատարմագրում «Ընդհանուր բժշկություն»):

Հեղինե Գևորգյան՝ 2016թ.-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի Կենսաբանության ֆակուլտետի բակալավրիատը՝ «Կենսաքիմիա» մասնագիտությամբ՝ ստանալով ուսուցչի որակավորում: 2018թ.-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի Կենսաբանության ֆակուլտետի մագիստրատուրան «Կենսաքիմիա» մասնագիտությամբ: 2021թ.-ին ստացել է կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան Գ.00.04 «Կենսաքիմիա» մասնագիտությամբ՝ պաշտպանելով «Պրոտոնային FOF1-ԱԵՖազի և մրջնաթթուջրածինլիազի փոխազդեցությունը ածխածնի տարբեր աղբյուրների և դրանց խառնուրդների խմորման ընթացքում» թեմայով ատենախոսությունը: Աշխատում է Երևանի պետական համալսարանի Կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնում՝ ավագ լաբորանտ (գործավար), նույն ամբիոնում՝ որպես ասիստենտ, կենսաբանական գիտությունների թեկնածու: Աշխատում է Երևանի պետական համալսարանի Կենսաբանության ֆակուլտետի «Կենսաբանության գիտահետազոտական ինստիտուտ»-ի հիմնարար և ախտաբանական կենսաքիմիայի լաբորատորիայում՝ որպես կրտսեր գիտաշխատող:

Ռոզա Գրիգորյան՝ Ավարտել է Երևանի պետական համալսարանի Քիմիական ֆակուլտետը՝ դեղագործական-քիմիա մասնագիտությամբ: 2005-2006թթ. աշխատել է «Վալերե ՍՊԸ»-ում՝ որպես դեղագետ: 2006-2010թթ. աշխատել է «Անիս ՍՊԸ»-ում՝ որպես դեղագետ: 2015-2019թթ. աշխատել է Հրազդանի պետական բժշկական քոլեջում՝ որպես ամբիոնի վարիչ և դասախոս:

2019թ.-ից առ այսօր աշխատում է Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջում՝ որպես դասախոս, «Ատամնատեխնիկական գործ և դեղագործություն» ամբիոնի վարիչ:

Վահե Հովհաննիսյան՝ Արարատի տարածաշրջանային պետական քոլեջի «Հաշվապահական հաշվառում» բաժնի ուսանող: Մասնակցել է ՈԱԱԿ-ի «Ուսանողության ձայն» նախագծի ուսանող փորձագետների վերապատրաստման դասընթացին:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

	05.07.2022 թ.	***Մեկնարկ***	***Ավարտ***	***Տևողություն***
1.	Ռեսուրսների դիտարկում	12:00	13:30	90 րոպե

	06.07.2022 թ.	***Մեկնարկ***	***Ավարտ***	***Տևողություն***
1	Հանդիպում ԷԲԱ ռեկտորի հետ	09:30	10:10	40 րոպե
2	Հանդիպում պրոռեկտորի հետ	10:15	10:55	40 րոպե
3	Հանդիպում Հոգաբարձուների խորհրդի անդամների հետ	11:05	12:05	60 րոպե
4	Հանդիպում ինքնավերլուծության խմբի անդամների հետ	12:10	12:50	40 րոպե
5	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	14:00	60 րոպե
6	Հանդիպում ամբիոնների վարիչների և կրթական ծրագրերի պատասխանատուների հետ	14:10	15:10	60 րոպե
7	Հանդիպում գործատուների հետ	15:20	16:20	60 րոպե
8	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:30	18:30	120 րոպե

	07.07.2022 թ.	***Մեկնարկ***	***Ավարտ***	***Տևողություն***
1	Հանդիպում դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ (10-12 հոգի)	09:30	10:30	60 րոպե
2	Հանդիպում ուսանողների հետ (10-12 հոգի)	10:40	11:40	60 րոպե

3	Զուգահեռ հանդիպում «Քույրական գործ» կրթական ծրագրի պատասխանատուի հետ	Զուգահեռ հանդիպում «Բուժական կոսմետոլոգիա», «Ատամնատեխնիկական գործ» կրթական ծրագրերի պատասխանատուների հետ	11:50	12:50	60 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ		13:00	14:00	60 րոպե
5	Զուգահեռ հանդիպում «Քույրական գործ» կրթական ծրագրի դասախոսների հետ	Զուգահեռ հանդիպում «Բուժական կոսմետոլոգիա», «Ատամնատեխնիկական գործ» կրթական ծրագրերի դասախոսների հետ	14:10	15:10	60 րոպե
6	Զուգահեռ հանդիպում Քույրական գործ» կրթական ծրագրի ուսանողների հետ	Զուգահեռ հանդիպում «Բուժական կոսմետոլոգիա», «Ատամնատեխնիկական գործ» կրթական ծրագրերի ուսանողների հետ	15:20	16:20	60 րոպե
7	Հանդիպում ուսանողական խորհրդի անդամների հետ		16:25	17:00	35 րոպե
8	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում		17:00	19:00	120 րոպե

	08.07.2022թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1	Հանդիպում ստորաբաժանումների ղեկավարների հետ /Ուսումնամեթոդական խորհուրդ,մանկավարժական խորհուրդ,	09:30	10:30	60 րոպե

	կարիերայի կենտրոնի ղեկավար, գրադարանավար, հաշվապահ, գնումների համակարգող, կադրերի բաժնի ղեկավար,միջազգային կապերի համակարգող/			
2	Հանդիպում ՈԱ պատասխանատուների հետ	10:45	11:45	60 րոպե
3	Բաց հանդիպում	12:00	13:00	60 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:10	14:10	60 րոպե
5	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	14:20	15:20	60 րոպե
6	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:10	17:10	60 րոպե
7	Հանդիպում ԷԲԱ ղեկավար կազմի հետ	17:30	18:00	30 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	Փաստաթղթի անվանում	Չափանիշ
1.	Ռեկտորի և պրոռեկտորի պաշտոնի անձնագրեր	1
2.	Ներքին կարգապահական կանոններ	2
3.	Ուսումնամեթոդական խորհրդի կազմ	2
4.	Ամբիոնների, ստորաբաժանումների տարեկան պլաններ	2
5.	Հաշվետվություններ/ամբիոնների և ֆակուլտետների/	2
6.	Ամբիոնների ընթացակարգ	2
7.	Դասացուցակներ /այս ուսումնական տարվա համար/	2
8.	Ամբիոնների 2021թ.ապրիլին կայացած՝ թ. 4-րդ նիստի արձանագրություն	2
9.	Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահի կարծիքը /ներկայացնել յուրաքանչյուր կրթական ծրագրին առնչվող 4-ական օրինակ/	2
10.	Դասալսումների մատյաններ / ամբիոններից մեկական/	2

11.	Առողջապահության ազգային ինստիտուտի հետ կնքված պայմանագիր	**2**
12.	Գլոբալ զարգացման ինստիտուտի հետ կնքված պայմանագիր	**2**
13.	SWOT վերլուծության հաշվետվություններ	**2**
14.	Պրակտիկ ունակությունների գնահատման թերթիկներ /չեկ լիստեր/	**3**
15.	Մատյաններ, պրակտիկայի մատյաններ /յուրաքանչյուր կուրսից՝ մեկական/	**3**
16.	Անատոմիա և ֆիզիոլոգիա ամբիոնի դասախոս Ա.Բաղդասարյանի կողմից կազմված ուսումնամեթոդական փաթեթ	**3**
17.	Թեմատիկ պլաններ	**3**
18.	Ստուգման գրքույկ	**3**
19.	«Բուժական կոսմետոլոգիա, դեմքի մաշկի խնամքի ընթացակարգերի իրականացում» մոդուլի շրջանակներում տրվող հանձնարարականներ	**3**

20.	Մոդուլների գնահատման ամփոփաթերթեր, գնահատման թերթիկներ, ուսումնառություն պլաններ	**3**
21.	Գնահատման համակարգին առնչվող լրացված հարցաթերթիկների օրինակներ	**3**
22.	Հեռակայի ուսումնական պլան	**3**
23.	Լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների իրականացման պատասխանատուի աշխատանքային պլան, հաշվետվություն	**4**
24.	Թեստերի օրինակներ ուղղված ուսանողի անձնային ունակությունների, նախասիրությունների բացահայտմանը	**4**
25.	Հետազոտությունը քույրական գործում դասընթացի ամբողջական ծրագիր	**4**
26.	«Ուսանողների կարծիքը դասավանդող դասախոսի վերաբերյալ» հարցման օրինակ	**4**
27.	Բարելավման միջոցառումների տարեկան պլանը	**4**
28.	Դասախոսի հաշվարկված ռեյտինգ	**5**

29.	Դասախոսների պորտֆոլիոներ, դասախոսի պլաններ /եթե կան, յուրաքանչյուր ամբիոնից՝ հինգական/	**5**
30.	Դասավանդողների կատարելագործման թեմաները և միջոցառումների ժամանակացույցը	**6**
31.	Ֆինանսական ռազմավարական պլան	**7**
32.	Եկամուտների և ծախսերի նախահաշիվ(բյուջե)	**7**
33.	Ֆինանսական վերլուծական հաշվետվություններ	**7**
34.	Բյուջեի բաշխումը 2019,2020 թվականների համար	**7**
35.	Ուսանողների շրջանում իրականացված սոցհարցումների լրացված օրինակներ ռեսուրսներին առնչվող	**7**
36.	Դասախոսների դանիտարական գրքույկի օրինակներ	**7**
37.	Որակի կենտրոնի կողմից տեղեկատվության և հաշվետվողականության տարեկան վերլուծությունը	**8**

38.	Ներքին և արտաքին շահակիցների պահանջները բացահայտող մեխանիզմների հարցաթերթիկների լրացված օրինակներ և արդյունքների վերլուծություն	**8**
39.	Բուկլետի օրինակ	**8**
40.	Շարժունությանն առնչվող համագործակցության պայմանագրեր	**9**
41.	Ներքին և արտաքին շահակիցների կարիքները վերհանող հարցաթերթիկներ կամ այլ փաստաթղթեր:	**10**

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

- Քույրական գործի համար նախատեսված սիմուլիացիոն լաբորատորիա
- Մուլյաժների սենյակ
- Կաբինետներ (Վիրաբուժական, Մանկաբուժության, Թերապիայի և ֆիզիոթերապիայի, Վերակենդանացման և աղետների բժշկության, Մանկաբարձության, Նեղ մասնագիտական առարկաների, Մանրէաբանության և ինֆեկցիոն հիվանդությունների, Դեղաբանության, Քիմիայի, Կոսմետոլոգիայի)
- Օրգանական և անօրգանական անալիտիկ քիմիայի լաբորատորիա
- Անատոմիայի և ֆիզիոլոգիայի լաբորատորիա
- Ատամնատեխնիկական լաբորատորիա
- Գրադարան

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԷԲԱ –«Էրեբունի» բժշկական ակադեմիա

ԻՎ- ինքնավերլուծություն

ՄՈՒՀ -Միջին մասնագիտական հաստատություն

ՄԿՈՒԶԱԿ- Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոն

ԶԾ- Զարգացման ծրագիր

ՄԿԾ–Մասնագիտական կրթական ծրագիր

ԱԾ- Առարկայական ծրագրի

ՄԾ-Մոդուլային ծրագիր

ՊԿՉ-Պետական կրթական չափորոշիչ

ՈԱՇ-Որակավորումների ազգային շրջանակ

ՈՒԽ-Ուսանողական խորհուրդ

ՄԽ-Մանկավարժական խորհուրդ

ՀԽ-Հոգաբարձուների խորհուրդ

ՈԱԿ-Որակի ապահովման կենտրոն

ՈԱ- Որակի ապահովում